

1305

613.88

U-37

1910

2010

12 002

1012
with map

613.8
U-37

Հրատարակութիւն ԹՄՖԱՅԷԼ, ԹՄՖԱՅԷԼԵՆՆՅԻ № 1.

610
143-ՄԵ

№ №

ՍԵՂԱՆԻ ԳԻՐՔԱՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ



ՆՈՐԱՊՍԱԿԱՆ ԱՅԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՎՍԻ

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Հ Ա Մ Ա Ր

10276

Թարգմանեց Գ. Մ. ՄԵԼ.

Կազմողը օգտուել է Բօկի,
Մէյերի, Գէրէյի, Լօկօի, Ման-
տիգացի, Մեսինգի, Լեվնֆելդի,
Փօլճնդեհնի, և ուրիշ հուշակաւոր
բժիշկների աշխատութիւն-
ներէն:

1910

Երկարաչարժ տպավիճաղը. „Ղազարով և Սլիանով“.

ՍԱՄԱՐՂԱՆԳ.

16266

010
50-61



Գ Լ Ո Ի Խ Ա.

Ի Ն Չ Է Ա Մ Ո Ի Ս Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը.
Ն Ր Ա Ն Պ Ա Տ Ա Կ Ը:

Ամուսնութեան միջոցով է միայն, որ տղամարդը կատարելապէս տղամարդ է դառնում, կինը՝ կատարեալ կին: Ամուսնութիւնն է միայն հնար տալիս նրանց արտադրելու իրանց նման էակներ: Տղամարդը և կինը պէտք է ամենասերտ կերպով միանան իրար հետ, որովհետեւ այդ միութիւնը գրաւական է նրանց երջանկութեան և դէպի պետութիւնը ունեցած բարոյական-պարտաւորութեան: Ըստ հարկին դատարակելով իրանց գաւակներին-այդ ապագայ քաղաքացիներին—նրանք իրանց հասարակութեան ամենաօգտակար անդամներն են հանդիսանում իրաւամբ: Վերջապէս ամուսնութիւնը կատարելագործում է նրանց, որովհետեւ զարգացնում է նրանց մարմինն ու հոգին և ստիպում է աշխատել՝ ընտանիքի գոյութիւնը ապահովելու համար:

Կեանքի ընկերուհուն ընտրելիս, տղամարդը պէտք է աշխատէ, որպէսզի նրանք երկուսն էլ ունենան ընդհանուր ընդունակութիւններ, առաքինութիւններ, իրաւունքներ, պարտականութիւններ, և սեփականութիւն: Ընդհանուր սեփականութիւնը և իրաւունքների հաւասարութիւնը ամուսնութեան հիմքն են կազմում: Ամուսինները պէտք է մի ամբողջութիւն կազմեն, նրանք պէտք է ի մի ձուլւեն և ապրեն մէկը միւսի համար: Ով որ կնոջ հետ վարւում է, որպէս մի ստրկուհու հետ — նա հասարակութեան թշնամին է, որովհետև բարոյականութեան և առաքինութեան մի ամբողջ ազբիւր է բըղխում այն յարգանքից, որ տածում ենք մենք դէպի կինը ընդհանրապէս և դէպի մայրը՝ առանձնապէս: Իւրաքանչիւր տղամարդ բնութիւնից ստիպւած պէտք է ամուսնանայ, իսկ մնալով ամուրի, նա յանցանք է գործում հասարակութեան դէմ, որի անօգուտ և անպէտք անդամն է դառնում: Ամուսնութեան նպատակն է՝ երկարացնել մարդկային ցեղի գոյութիւնը և յոյսաշխարհ բերել պետութեան համար տղազայ պիտանի քաղաքացիներ: Մանկան դաստիարակութիւնը, ծառի աճեցումն ու դաշտի մշակումն — ահա թէ որպիսի աշխատանքների է գերապատուութիւն տրբ-

ւում ամբողջ Պարսկաստանում և Հնդկաստանում, և մենք պէտք է ամեն ջանք գործ կենք, որպէսզի բարոյապէս յետ շմանք այդ ազգերից:

Սուրբ գիրքը ամուսնութիւնը կատարելագործութիւն է համարում, ամուրիութիւնը՝ անպատուութիւն: Իսկ Եսայի մարգարէն ասում է, որ կանանց համար աղջիկ մնալը խայտառակութիւն էր համարում:

Հունգարացիք վաղուց արդէն անհետացած կրիւնէին երկրիս երեսից, եթէ ամուսնութիւնը չլինէր նրանց համար մի օրէնք, որին իւրաքանչիւր մարդ պարտաւոր է հնազանդել: Հին դարերում յոյներն ու հռովմայեցիք ոչ միայն պարպկաարում էին շատ երեխայ ունեցողներին, այլ նոյնիսկ որոշ պատիժներ էին սահմանել ամուրիների համար: Ամուսնութիւնների թիւը բազմացնելու համար Օգոստոս կայսրը թոյլատրեց բոլոր քաղաքացիներին, բացի սենատորներից, ամուսնանալ ճորտութիւնից արձակւած կանանց հետ, և այդ ամուսնութիւնները բացի օգուտից ուրիշ ոչինչ չուին: Նոյն նպատակով Օգոստոսը յայտնեց աղբային ժողովում, որ ինքը իւրաքանչիւր ընտանիքի հօր յատկացնում է հազարական դահեկան: Յզի կանանց այնպիսի պատիւներ էին տրւում, որպէսզի օրիորդները առանց նախանձի չկարողանան

նայել: Իւրաքանչիւր քաղաքացի պարտաւոր էր ճանապարհ տալ յոյ կնոջ, առանց նայելու, թէ որ դասակարգին է պատկանում նա. պատրիկները պարտաւոր էին առաջինը ողջունել նրան և այլն:

Կամեյլոսի ժամանակ ամուրի հռովմայեցիք պարտաւոր էին ամուսնանալ պատերազմի դաշտում ընկած մարտիկների այրիների հետ, կամ ենթարկում էին որոշ տուգանքների և հարկերի: Նոյն յարգանքն էր վայելում ամուսնութիւնը նաև գաղղիայցիների, ֆրանկների, գերմանացիների և ուրիշ շատ ազգերի մէջ:

Այդ ընդհանուր յարգանքը դէպի ամուսնութիւնը գերազանցօրէն խօսում է յօգուտ այն բանի, որ ամուսնացածները, թէ՛ տղամարդ և թէ՛ կին՝ անհամեմատ աւելի բարձր են դասւում հասարակութեան աշքում, մինչդեռ ամուրիները աննպատակ և անօգուտ տեղ են բռնում այս աշխարհում:

Ամուսնութիւնը հասարակական կեանքի հիմքն է կազմում և բարոյական վերահսկիչն է հանդիսանում: Այդ կոչումներին նա իրաւամբ արժանի է. նա է յետ կասեցնում մարդկանց մոլի և անառակ կենցաղից և այդպիսով աւելի առաքինի է դարձնում նրանց: Որքան յաճախ է պատահում, երբ կինը յետ

է պահում ամուսնուն, որը արդէն պատրաստ է մի անբարոյական քայլ անելու: Թանգազին և սիրելի գաւախների վրայ ձգած մօր մի՛ հայեացքը շատ յաճախ պահում է նրան ազնիւ ճանապարհի վրայ, որից նա արդէն պատրաստ էր շեղելու: Հայրը խրայնում է իւր մէջ եղած վատ բնագոյները, ամաշելով իւր գաւախներից և վախճնալով արատաւորել իւր յիշատակը: Ի զուր չէ, որ մեծ քաղաքապէտները խորհուրդ են տալիս ամուսնացնել զինւորներին, որպէսզի զօրքից փախուստ տալու սովորութիւնը վերանայ: Յունաց և հռովմայեցոց զօրքերը փախստականներ չեն ունեցել. նրանց զինւորները ամուսնացած էին և պատերազմներում միշտ յաղթանակում էին:

Ամուսնութեան մասին կազմած այդ հայեացքը բաւականաչափ առիթ պէտք է տայ վարչական մարդկանց, որպէսզի նրանք իրանց իշխանութեամբ նպատտեն ամուսնութեան տարածման հպատակ ժողովրդի մէջ:

Ամուսնութիւնը հասարակական կեանքում այդքան կարևոր գեր խաղալով հանդերձ միևնայն ժամանակ պէտք է չափազանց լուրջ հարց վինի այն մարդկանց համար, որոնք ուզում են ամուսնանալ:

Պէտք է լաւ յիշել, որ հարցը վերաբերում է երկու մարդկային կեանքերի, որ երկու մարդ միութիւն են հաստատում, և որ այդ կապը կարող է բերել նրանց համար, թէ մեծագոյն երջանկութիւն և թէ անհասանելի սանջանքներ:

Ընտրութիւն անելիս՝ տղամարդը իւր ամբողջ ուշադրութիւնը պէտք է դարձնէ այն բանի վրայ, թէ որքան է դաստիարակած և որքան է բարոյական ընտրեալ կինը, իսկ նիւթականին երկրորդական տեղ պէտք է տայ: Եթէ կինը ունի այդ յատկութիւնները՝ նշանակում է՝ ընտանեկան երջանկութիւնը գրեթէ ապահոված է: Եւ եթէ կոպտութիւնն ու ասպտութիւնն ընտանեկան խռովութիւնների մայր պատճառն են հանդիսանում, կրթութիւնն ու մտաւոր բարձր զարգացումն էլ շատ են աւերացնում ընտանեկան կեանքի հմայքը:

Կնոջ նախ քան ամուսնութիւնը ունեցած սիրային ինտրիգների մասին մի կերպ տեղեկանալով՝ ամուսինը շատ յաճախ լցւում է ատելութեան և անտարբերութեան զգացմունքներով դէպի իւր կինը: Հէնց այդ է պատճառը, որ կինը բնագոյրար միշտ խռտափում է իւր առաջին կապը շօշափելուց: Նա պատրաստ է կրելու ամեն մի տանջանք, միայն թէ

իւր գաղտնիքը գերեզման տանի հետը:

Չտո բնական է, որ եթէ ամուսինը ձանձրայնէ կնոջը իւր հարցարնութիւններով այդ մասին, կինը կամայ-ակամայ պէտք է ստի: Վնչ ինչ դրժւարը միայն առաջին քային է, առաջին ննդամ ստել է և բաւական է, որ սկիզբը գրեց—այնուհետեւ այդպիսի ամուսինը յաճախ է խարելու: Ինձ թւում է, որ եթէ ընտրեալ կնոջ բարոյականութիւնը ոչնչով չէ արտատաւորւած, եթէ կան ընդհանուր հակումներ, ձգտումներ, մի խօսքով՝ այն ամենը, ինչ որ պէտք է երջանիկ ընտանեկան կեանքին — հարկաւոր է ձեռք բաշել այդ բոլոր նախապաշարմունքներից, որոնք աւելի շուտ թուլամորթութեան նշան են, քան մի այլ գրական յատկութեան: Իմ ծանօթներից մէկը հրաժարեց ամուսնանալ մի սիրող և արժանաւոր կնոջ հետ մի միայն այն պատճառով, որ կինը նախ քան հաւատարմութիւն խոստանալը՝ խոստովանել էր իւր երիտասարդական մեղքը: Կինը չէր կամեցել ընտանեկան կեանքը կեղծիքով սկսել, բայց նրա փեսացուն չհասկացաւ նրան, չըզնահատեց նրա ուժեղ և անկեղծ բնաւորութիւնը: Վեց ամիս անցած հէնց նոյն պարտնը պատկեց մի կնոջ հետ, որը երեք անգամ այրի էր մնացել և այրիութեան ժամանակա-

միջոցում երևի յաճախ նոյն տեսակ մեղքեր է գործել:

Իմ կարծիքով այն կիներն է արժանի յուրջ ուշադրութեան, որք ամեն ինչ անկեղծութեամբ խոստովանում է, որովհետեւ աւելի շուտ այգալիսին է պահպանում ամուսնական հաւատարմութիւնը, և ոչ նա, որ ամեն ինչ, ծածկում է: Կըհիացնէր ինձ այն կիներ, որք դար բացարձակօրէն յայտնէր ինձ. «Քանի գեռ ազատ էի, ես բարոյական իրաւունք ունէի անօրինել իմ վարքը ըստ իմ հայեցողութեան և ուրեմն գործողութիւններէս համար ոչ որի պարտաւոր չեմ հաշիւ տալու: Բայց ընդունելով ամուսնական լուծը, ես ներքում եմ նրան իմ ներկան և սպազան: Իսկ անցեալս միմիայն ինձ է պատկանել»:

Աւելի շուտ այգալիսի կիներն է շնորհում մեզ ընտանեկան երջանկութիւն, քան այն անմեղ ազգիկը, որ վերջը մուսացութեան է տալիս իւր ամուսնական պարտականութիւնները:

Ի՞նչն է խկապէս կիոջ բարոյական մարքութեան նշանացոյցը: Արդեօք այն, որ նա խոյս է տալիս սեռական յարաբերութիւնից, նոյնիսկ նրա մտաին մտածելուց, թէ՛ այդ բոլորը միասին վերցրած:

Դա չափազանց կարեւոր հարց է և արժէ նրանքնութեան հետ թարկել:

Պատահում են դէպքեր, երբ կիներ ձեր սիրուն գոհում է իւր ստացածը անունը, ինչ որ թանգ է և սուրբ նրա համար: Նա ձեզ անկեղծօրէն յայտնում է, որ այսուհետեւ էլ նոյնը կանէ ձեզ համար, որ նա պատրաստ է ամենաձանր գոհարբութիւնների, միայն թէ չտեսնէ ձեր վիշտն ու արցունքը: «Նս քեզ համար ամեն ինչ պատրաստ եմ անելու, որովհետեւ սիրում եմ քեզ, որովհետեւ դու իմ կեանքն ես, իմ երջանկութիւնը, իմ յայտը»: Ինչով էք կարող գուր երախտապարտ լինել կիոջ այդ ամենի համար, եթէ ոչ ամուսնութեամբ: Կայ արդեօք մի այլ բան, որով գուր սպացուցած լինէիք, թէ գնահատում և դպում էք նրա ազնւութիւնն ու սէրը:

Այգալիսի դէպքերում ծնողները արգելք չպէտք է հանգիստանան այդ տեսակ ամուսնութիւններին, յիշելով որ ընտանեկան երջանկութիւն բերողը փողը չէ, այլ մարտը և անկեղծ սէրը: Ոմանք հաւատացնում են որ ամուսնութիւնից յետոյ սէրը շատ շուտով գոյորշիանում է, որովհետեւ ցանկութիւնները այդ ժամանակ բաւարարւած են լինում: Բայց դա մեծ սխալ է: Ամուսնութիւնից անմիջապէս յետոյ միայն անառակներն են կորցնում սէրը, բայց ոչ շիտակ բնաւորութեան տէր մարդիկ, որոնք խորա-

այդ յարցը

պէս գիտակցում են արած քայլի ամբողջ լրջութիւնը, գիտակցում են, որ կինը նրանց յանձնել է իւր անունն ու մարտը սիրտը:

Ճիշտ է, ամուսնութիւնից որոշ ժամանակմիջոց անցնելուց յետոյ, սէրը տեղի է տալիս մի նոր զգացմունքի, բայց այդ զգացմունքը արժանի է սէրին: Գա՛ մտերմութիւնն է, որ սերտօրէն կապում է ամուսիններին և առաջ է բերում նրանց մէջ միասին և ընդհանուր կեանքով ապրելու մի մեծ պահանջ: Հէնց դրա մէջն է պարունակում ամուսնութեան ամբողջ հմայքը:

Բայց այդ հմայքը վայելելու համար ամուսինները պէտք է վայրեն իրար հետ մեծ հոգատարութեամբ և չափազանց քնրչաբար, նրանք պէտք է փոխադարձ զիջումներ անեն իրար, առարց օգուելու իրանց ազդեցութիւնից կամ հեղինակութիւնից և խուսափեն յամառ լինելուց: Տղամարդը կնոջ ներկայութեամբ տաղտկութիւն կամ ձանձրոյթ չպէտք է երևան հանի, իսկ կինը իւր ամբողջ գորովն ու խնամքը պէտք է թափէ ամուսնու և երեխաների վրայ, լաւ իմանալով, որ ամեն ինչ ունի իւր ժամանակը՝ մանկութեանը տւած են խաղալիքներ, երիտասարդութեան՝ պճնանք և արդուզարդ. բայց ինչ վերաբերում

է մօրը, նա պէտք է զսպէ իրան և լինի խոհեմ: Ի՛նչ է ստանում կինը իրան հետամտող պարոններից, որոնք զանազան պարերեկոյթներում և հիւրոյթներում շողորթում են նրան և հաճոյախօսութիւններ անում... Գեռ հասկանալի է, երբ խօսքը սրտի ընկեր որսնող մի օրիորդի է վերաբերում, բայց կինը, մայրը, ի՛նչ է ստանում նա այդ դաստիարակութիւններից: Ես սրտանց խղճում եմ այդպիսի կնոջ և ցաւում նրա ամուսնու և զաւակների փոխարէն... Գինը հեռոգհեռէ կտրւում է ընտանիքից, նրան վիտովացնում հասարակաց գովեստների և երկրպագուների բերկրանքի մթնոլորտը: Նա իրա համար աննկատելի կերպով արագութեամբ դէպի անկումն է զիմում: Բայց թող իմանան կանայք, որ այսօրուայ նրանց ոտների տակ սողացող սիրահարը վաղը ձգելու է նրանց, ինչպէս մի անպէտք խաղալիքի: Եւ երբ նրանց ընտանեկան կեանքի կատարեալ քայքայման ժամը հնչէ, ով պէտք է մեղազրուի: Իհարկէ կասեն տղամարդը: Նա կոպիտ է, նա բարբարոս է, նա զահիճ է, նա խանգոտ է— ահա թէ ինչով է արգարանում ճնշւած անմեղութիւնը: Եւ տեսէք, որ այդպիսի դէպքերում համարեան միշտ ընկերուհիներն են մեղաւոր դուրս գալիս իրանց վատ ազդեցու-

[Թեամբ: Որ կնոջ փշայնոզը հէնց կլինն է, որ կայ — դա
 մի անհերքելի ճշմարտութիւն է: Ընտանեկան կեանքը
 այդպիսի դէպքերում դժոխք է գառնում: Կինը սկսում
 է լալ և դանգատուել իւր ճակատագրից իւր փափկա-
 սուն բարեկամներին, որոնք ոչ միայն չեն թեթևաց-
 նում նրա տանջանքները, այլ ընդհակառակը, էլ
 աւելի են գրգռում ու վրդովում նրան: Ամուսինները
 բերանի մաստակ են դառնում, նրանց ծաղրում են,
 սրախօսութիւններ անում նրանց հասցէին և ասե-
 կոսէները վնասով աւելի մեծ չափեր են ընդունում:
 Զատ յաճախ ամեն բանում մեղաւոր է ճանաչում այն
 սղամարդը, որը իւր վերաբերմունքով դէպի կլինը ռի
 ու ատելութիւն է ծնեցնում նրա մէջ: Եւ նա զուր
 տեղը թող ուրիշներից չհեղանայ, եթէ նրա գլխին
 վերջը մի փորձանք գալու լինի: Իհարկէ սղամարդին
 ճշմարիտ ճանապարհին ընտելացնելը, նրան գայթակ-
 գութիւնից, ամօթայի կրքից և անվայել կեանքից
 հետ պահելը երբեմն ամբողջապէս կնոջիցն է լինում
 կախած: Նա իւր ձեռքին գորեզ գէնքեր ունի՝ սիրող
 սիրտ, հեղօթիւն և արցունք: Եւ նա շատ դէպքում
 մի պահապան հրեշտակ է ներկայանում իւր ամուս-
 նու համար, որի մէջ շար դին է խօսում և զործում:
 Թէև միշտ և ամեն բանի մէջ կնոջ արդարացնել չէ

10976

կարելի, բայց և այնպէս պէտք է ընդունել, որ ընտա-
 նեկան խռովութիւնների մէջ մեծ մասամբ տղա-
 մարդն է լինում մեղաւոր: Նա իւր իշխանութեամբ
 երբեմն այն աստիճան յափշտակում է, որ կնոջ աչ-
 քում վերջիվերջոյ մի անտանելի բռնակալ է գառ-
 նում:

Փրկիտփաների ասելով՝ կանանց ստաբազոյն
 մասը գանգատում է, որ սիրոյ ակնկալած զարճու-
 թիւնների փոխարէն նրանց միայն ստրկութիւն է
 բաժին ընկնում: Բոլոր իրաւունքները իրան վերա-
 պահելով՝ տղամարդը կատարելապէս իրաւագուրկ է
 դարձնում կնոջը, ուստի և փոխանակ ընկերութեան
 և հաւասարութեան հանդէս են գալիս մի կողմից՝
 բռնութիւն, միւս կողմից՝ ստրկութիւն: Կինը ամուս-
 նանաւուն պէս իւր ամուսնու մի մասն է դառնում,
 իսկ ամուսինը այդ բոլորից սկսած պէտք է ապրէ
 նրանով և նրա համար: Կինը պէտք է օգուէ այն
 ամենից, ինչ որ տւած է ամուսնուն. նա պէտք է
 նոյն քան իրաւատէր լինի, որքան և նրա այրամու-
 սինը՝ ոչ թէ այն պատճառով, որ նա կլին է, այլ որ
 նա ամուսին է: Նա պէտք է կատարեալ ազատու-
 թիւն վայելէ՝ ոչ թէ այն պատճառով, որ ամուսինն է,



Ահա փիլիսոփաների բարոյախօսութիւնը, և ով տողորւած է այդ բարոյախօսութեամբ, նա իւր ընտանեկան կեանքում երջանիկ կըլինի:

Սակայն ինչո՞վ բացատրել, երբ լուսաճաճանշ ու խանդավառ յոյսերից յետոյ կեանքը յանկարծ այդպէս մթաղնում է: Ինչիցն է, որ ամուսինները կեանքի նաւահանգստից երկուսով հէնց դուրս են գալիս թէ չէ, խոկոյն ժայռերի և խութերի են դէմ ընկնում: Խօսեցէ՛ք այդ նաւաստիների հետ, և դուք կիմանաք, որ խորտակումը մի աննշան աւաղից է առաջ եկել:

Ես շատ եմ լսել գանդատներ ջահէլ կանանցից: Նրանք դժգոհ են ամուսնու անուշադրութիւնից, նրանց ճնշում է այն հանգամանքը, որ ամուսինը բաւականաչափ քերշաբար չէ վարում իրանց հետ, և յամենայն դէպս առաջւայ նման սիրալիր չէ: Սակայն փափկասուն գանդատաւորները այնքան էլ իրաւացի չեն: Թող նրանք նեղութիւն կրէին մի փոքր մտածելու, թէ որքան է աւելացել ամուսնու պարտականութիւնների թիւը, որքան փոխել է նրա գործերի ընթացքը, որքան նա լրջացել է կեանքի պարտգանների հանդէպ—և նրանք կըհամոզւէին, որ գանդատներ անելու իրաւունք չունեն:

Գ Լ Ո Ւ Խ Բ.

ՄԵՂՐԱՄՍԻ ԱՌՈՂՋԱ ԲԱՆՈՒԹԻԻՆԵՐ:

Գալով մեղրամսի անողջաբանութեանը, մենք տեսնում ենք, որ այստեղ, ինչպէս և մարդկային ընդհանուր կեանքում ամենից շատ կարևոր դեր հագուստն է խաղում: Առաջնակարգ տեղը բռնում է, իհարկէ, կանանց հագուստը, որովհետև նրանք են կրում իրանց սրտի տակ զաւակներին, հետևապէս նրանք պէտք է առողջ և ամբակազմ լինեն, որպէսզի կարողանան առողջ սերունդ արտադրել: Կանանց հագուստը հզօրապէս կախւած է մօղայի փոփոխականութիւնից, մօղան բռնակալի նման իշխում է կանանց վրայ: Կար ժամանակ, երբ կանանց հագուստը ոչ թէ այլանդակում էր նրանց մարմինը, այլ ընդհակառակը, նողատում էր նրա աճման: Հնազոյն ժամանակներից մնացած արձանները դիտելիս, մենք տեսնում ենք, թէ ինչ վայելչակազմ հասակ են ունեցել մեր նախնիները: Այնտեղ բացակայում է այն

ամենը, ինչ որ սեղմում և կաշկանդում է մարմինը, սակայն և այնպէս այդ մարմինները մենք համարում ենք միանգամայն իդէալական: Միթէ այդ արձանները հին քանդակագործների երեակայութեան պատուին են միայն հանդիսանում: Ո՛չ, այդպիսի իդէալական մարմիններ ունեցել են նաև նրանց շրջապատող ժամանակակից մարդիկ: Որպիսի կատարելութիւն նրանց ստների և մասների մէջ: Երբ մենք տեսնում ենք, որ այժմ ամենուրեք այդ ամենը այլանդակում է զանազան կապանքներով, մեզ թւում է, թէ գտնւում ենք չինացիների մէջ, որոնք դիտմամբ այլանդակում են իրանց ստները, որպէսզի փայտ է գոթուրներ հագած դէս ու դէն վազվզեն: Տեսնենք վերջապէս արձանի իրանը: Կարելի է արդեօք երեակայել մարմնի մի աւելի վեհապանծ ձև, աւելի նրբութիւն, քան այն, որ մենք տեսնում ենք հին յոյների և հռովմայեցիների գեղարեեստական գործերի մէջ: Նախնի մարդիկ կօրսետ ասած բանը չգիտէին ինչ է: Նրանց ծանօթ չէր այդ սարսափելի մեքենան, որ այլանդակում է մարդու մարմինը և բայքայում օրգանիզմի առողջութիւնը: Նրանց կանանց մարմինը աւելի գեղանի էր, աւելի նուրբ, աւելի կատարեալ և աւելի գրաւիչ, քան մեր ժամանակայ կանանցը:

Բացի այդ բոլորից՝ նախնի կանայք հիմիկաններից աւելի առողջ էին: Կանանց հիւանդութիւնների մեծ մասը աննպատակայարմար հագուստից է առաջ գալիս, և ոչ թէ միայն ծննդաբերութիւնից, ինչպէս նրանք յաճախ գանգատուում են: Կանայք իրանց հիւանդութիւնների մի երրորդականից ազատ կըլինէին, եթէ նրանք աւելի քիչ պճնէին և աւելի շատ մտածէին իրանց առողջութեան և կոշման մասին: Կանանց արդուզարդերի մէջ ոչ մէկը այնպէս չէ խանդարում յատկապէս նրանց գործարանների գործառնութիւնը, ինչպէս կօրսետը: Թող նրան՝ յ օգուեն բարեաստիճան սպաները միայն, բայց մեր կանայք, որոնցից կախում է ազգայ սերնդի բազումութիւնը կամ գծբազումութիւնը, պէտք է աւելի խոհեմ և գգոյշ լինեն կօրսետի նկատմամբ:

Ամենից առաջ կօրսետը ներգործում է մարմնի այն մասերի վրայ, որոնց ընդգրկում են ստորին կոկերը: Նա սեղմում է իրանը, ճնշում է լիարդը, փայծաղը, ստամոքսը, աղիքները և խանգարում նրանց գործառնութիւնը: Որովայնի գործարանները այդ ճնշումից ստիպւած փոխում են իրանց իսկական տեղերը և անկանոն դիրքեր են ընդունում: Մի կողմից ստոծանին է բարձրանում, միւս կողմից կօրսետն

է ճնշում կողերը: Իսկ դա մի չափազանց արգելաօրէթ հանգամանք է թորերի զարգացման համար. չնչառութիւնը դրանից խանգարում է, արիւնն էլ ըստ հարկին չէ մարբուում: Փորոտիքը սաստիկ ճնշում է գործ դնում կոնքի վրայ, իսկ դրանից առաջ է գալիս արգանդի անկում և ուրիշ ցաւեր: Ամուսնացած կանանցից շատերը վերջը դառնապէս զգչում են, որ օրիորդ ժամանակները ամուր կապկապել են իրանց մարմինները:

Ստամոքսի վրայ գործ դրւած ճնշումը թուլացնում է մարսողութիւնը և կորցնում է ախորժակը: Այդ ճնշումը ամենից շատ վնաս է բերում կանանց ստինքներին, մանաւանդ այն ժամանակ, երբ կանայք աշխատում են թաղցնել բաւականաչափ չզարգացած ստինքները զանազան միջոցներով, օրինակ՝ բարձիկներով, շորի կտորներով և այլն, որպէսզի չերևայ, թէ նրանք վտիտ են: Այդպիսի դէպքերում պտուկները չեն կարողանում զարգանալ և մէջ են մտնում, իսկ դրա հետևանքը լինում է այն, որ երեխան ամենևին չէ կարողանում ծծել ստինքը, կամ եթէ մի կերպ ծծում է, ահագին ցաւեր է պատճառում մօրը, այնպէս որ ցաւաբեր պտուկների գոյութիւնն անգամ սովորաբար աւելորդ է համարւում:

Առողջութիւնը պահպանելու համար, կամ հէնց տղամարդկանց գեղասիրական ճաշակին յարմարելու դիտաւորութեամբ՝ կանայք արհեստական միջոցների են դիմում: Եթէ նրանք դնում են արհեստական ատամներ, որպէսզի շտառապէն այն հիւանդութիւններով, որոնք առաջ են գալիս վատ մարսողութիւնից, այդ դէպքում ոչ մի խելքը գլխին մարդ չի կշտամբի նրանց. բայց երբ մենք տեսնում ենք, որ նրանք փոխանակ զարկ տալու իրանց մարմնի զարգացմանն ու աճմանը, բռնի կերպով այլանդակում են բնութեան տւած գեղեցիկ ձևերը—գա արդէն իհարկէ չենք կարող շտեկ, որ մի սուկալի անարգարութիւն է: Թոյլ զարգացած ստինքները պէտք է ազատ թողնել, որպէսզի նրանք աճել կարողանան. երբէք չպէտք է սխմել նրանց: Բժիշկ Մեսինգը իւր գրւածքներից մէկում շատ յաջող նկարագրում է, ինչպէս կանայք բռնի կերպով այլանդակում են իրանց մարմինը, շնորհիւ անսխտ և աննպատակայարմար հագուստի:

Ստինքների այլանդակման մասին նա հետևեալն է գրում. ,,12-14 տարեկան նօրմալ հասակ ունեցող ազգիկը սկսում է ցաւեր զգալ իւր տակաւին չզարգացած ստինքների մէջ: Մայրը տարակուսանքի մէջ է

ընկնում, թէ ինչից կարող է այդ պատահած լինի: Մանկամարդ աղջկայ կուրծքը մրսելուց պահպանելու համար պատում են շալով, բամբակով կամ տաք բարձիկով: Բայց այդպիսով աղջկայ ստինքները սխմում են, նրանց զարգացումը կանգ է առնում. մի փոքր ժամանակից յետոյ կարող է առաջ գալ ստինքների լիակատար բորբոքումն, սաստիկ զգայնութիւն, տաքութիւն և քոր: Ստինքները փոքր ինչ մեծանում են, այն ինչ հիւանդների զգեստները բոլորը միաժամանակ չեն փոխւում. նրանցից մի քանիսը գեռ մաշած չեն լինում և պէտք են գալիս հագնելու և այդպիսով ստինքները մշտապէս ճնշւում են: Բնութիւնից առողջ և առաձգական ստինքները այնքան էլ թէև չեն ազդւում այդ ճնշումից, բայց նրանց էլ պտուկներն են վնասւում: Պտուկների շուրջը շրջանաձև ախօսներ են գոյանում, և ճնշումից այնպէս են մէջ խրւում, որ նրանց զարգացումը բոլորովին կանգ է առնում և այդպիսով պտուկներ չեն դառնում կնոջ համար, այլ մի կատարեալ տանջանք: Բժշկութեան մասին մտածելն անգամ աւելորդ է, որովհետև իբր թէ տաք պահելու համար կրծքի վրայ շորի կտորներ և նման բաներ են գցում: Աղջիկը դպրոցն աւարտելուն պէս սկսում է մօղայով հագնել:

Նա իրան արդէն մեծ օրիորդ է համարում, մոռանալով որ ստինքները գեռ չեն էլ սկսել զարգանալ: Այստեղ ահա օգնում է կօրսետը, որը ոչ միայն թագցնում է ստինքների վտիտ լինելը, այլև ցանկալի տեսք է տալիս նրանց: Ստինքները ընտելանում են ճնշման, պտուկների զարգացումը կանգ է առնում, նրանց շուրջը գոյացած ախօսները մշտապէս լցւում են ճարպով և առաջ է գալիս մի կոպիտ կեղև, որ ընդամիշտ զրկում է պտուկները իրանց բնական ընթշութիւնից:—

Թոքերի հիւանդութիւնների տրամադիր կանանց հուպ տւած կօրսետը կարող է միայն շտապեցնել յիշեալ հիւանդութիւնների երևան գալը, մանաւանդ կօրսետը նպաստում է արիւն թքելուն և այլն:

Կօրսետի առաջացրած ճնշումից մարմնի մկանները սաստիկ թուլանում են, այնպէս որ նրանք իվերջոյ առանց կօրսետի չեն կարողանում կատարել իրանց գերը և մարմինը առանց նրան, կարծես, դէս ու դէն է թափթփւում: Եւ եթէ այդ անբնական անձուկ վիճակի մէջ կարիք է զգացւում ուժեղ շարժումներ անելու, այդ ժամանակ աւելի ևս զգալի է դառնում կօրսետի հասցրած վնասը մարմնին: Այստեղ արդէն ընդհանուր առողջութիւնն էլ գերծ չէ

վտանգից: Բաւական է միայն նայել կօրսետի մէջ պարուրած կնոջը պարելիս կամ Ֆիլիքրական այլ շարժումներ անելիս և դուք կտեսնէք, թէ որքան ծանր է նա շնչում: Կրծքի ստորին մասը չէ ընդլայնուում և մկանների ոյժը անբնական կերպով բարձրացնում է կուրծքը, որովհետև աւելի զօրեղ կերպով կրծքի վերին մասն է ընդլայնուում: Գրողներից շատերը տղամարդու և կնոջ շնչառութեան մէջ հետեալ տարբերութիւնն են գտնում: Տղամարդիկ շնչելիս, ասում են նրանք, կրծքի և որովայնի մկանները միաժամանակ են շարժուում, այն ինչ կանանց շնչառութիւնը կողերի բարձրանալուց և իջնելուց է միայն խմացուում: Բայց այդ բաժանումը այնքան էլ ճիշտ չէ: Աղջիկը մինչև կօրսետի մէջ սխմելը նոյն շնչառութիւնն ունի, ինչ որ տղան: Կնոջ շնչառութեան առանձին տիպը վերջն է միայն երևան գալիս: Անկանոն և անբնական հագուստից ոչ միայն կուրծքն է վնասուում, այլ նաև ոտները, որոնց ցաւից, մանաւանդ, յղի կանայք շատ են գանգատուում: Կանանցից շատերը գուլպաները վայր ընկնելուց և ծալժլելուց ազատ պահելու համար կապիչները չափից դուրս հուպ են տալիս: Այդ՝ ըստ երևոյթին միանգամայն անմեղ, սովորութիւնը անհազին վնաս

է բերում արեան շրջանառութեանը: Աւելորդ չէր լինի կանանց անդրավարտիկն էլ նորաձևութիւնների ենթարկել: Ներկայիս ձևը բացի վնասից, ոչ մի օգուտ չի բերում: Չքաւոր դասակարգի կանայք անդրավարտիկ ասած բանը չզիտեն նոյնիսկ ինչ է, այն ինչ նրանք աւելի առողջ են ունեւորներից, որոնք գործ են անում անդրավարտիկը:

Աւելի նպատակայարմար են բրդէ նուրբ կտորից կարած անդրավարտիկները, որոնց ձևը տղաների անդրավարտիկների ձևից ամենևին չպէտք է տարբերուի: Աննպատակայարմար անդրավարտիկը, շատ է պատահել, երբ արգանդի դում է առաջ բերել և նոյն կերպով էլ վնասել է միզապարկի կամ ուղիղ աղիքի անցքերը: Այդ ամենը հարկաւոր է փոփոխութիւնների ենթարկել:

Ինչ վերաբերում է ուտելիքին, պէտք է ասել, ուտելիքն էլ, խմելիքն էլ, լաւ տեսակից պէտք է լինեն, բայց պէտք է չափաւոր գործածեն, որպէսզի մարսողութիւնը արագ և հեշտ կատարուի:

Անչափ ուտել խմելն առողջութեանը վնաս է, դրանից յոգնում է ստամոքսը, իսկ վերջնիս քայքայումը անդրադառնում է ծննդաբերական գործարանների վրայ:

Յոյր հոշակաւոր բժիշկները, թէ՛ հները և թէ՛ նորերը սննդի վերաբերեալ հետեալ բէժիմն են առաջարկում:

1) Ընտրել լաւ տեսակի և զիւրամարս կերակուր:

2) Հնար եղածի չափ կանոնաւորել ճաշի, նախաճաշիկի, ընթրիքի ժամերը և ախորժակի բացակայութեան դէպքում երբէք հարկադրեալ չուտել:

3) Ուտելիս չպէտք է շտապել և կերակուրը պէտք է լաւ ծամել, որպէսզի թուր շատ խառնել նրա հետ և այդպիսով ստամոքսի գործը թեթեանայ:

4) Պէտք է ուտել իւրաքանչիւր 5-6 ժամից յետոյ, որպէսզի ստամոքսը հանգստի էլ ժամանակ ունենայ, ինչպէս և միւս գործարանները:

5) Կենդանական սնունդը որքան հնար է պէտք է խառնել բուսականի հետ: Մարդը ամենակեր կենդանի է, ուտի և բացառապէս բուսական կամ բացառապէս կենդանական սնունդը չէ կարող ըստ հարկին օգտակար լինել նրան:

6) Մէկ անգամից երբէք չպէտք է շատ ուտել, այլ հեռանալ սեղանից թեթեւ ստամոքսով:

7) Չպէտք է գործածել այնպիսի համեմունք, որոնք արհեստական կերպով ախորժակ են բաց անում, զրգուում են ստամոքսը և թօշնեցնում նրան:

8) Մննդի մէջ ճոխութիւն չմտցնել: Կերակուրների չափազանց ճոխութիւնը նոյնպէս քիչ վնաս չի բերում:

9) Գինին և ուրիշ ոգելից խմիչքներ ի շարք գործ չգնել: Աշխատել հեռու կենալ զանազան վիկեօրներէց, խի գործածելու դէպքում, ընդունել քիչ քանակութեամբ, այն էլ՝ անսպառճառ ուտելուց յետոյ: Ոգելից խմիչքների չափազանց գործածութիւնը խիստ վնասակար է առողջութեան համար: Այդ խմիչքները ոչ միայն զրգուում են ստամոքսի մազասային թաղանթը, քայքայում նրա մարսողական ոյժերը և սկիզբ դնում ստամոքսի տանջալից գումին, այլ կորստաբեր ազդեցութիւն են ունենում նաև ուղեղի վրայ: Մտաւոր կարողութիւնները բթանում են, հարբեցողը սկսում է կամաց-կամաց խենթանալ և վերջը ուղղակի խելագարութեան է հասնում: Օրինակները դժբախտաբար բ ա գ մ ա թ իւ են հասարակ ժողովրդի մէջ:

10) Ճաշից առաջ անհրաժեշտ է մի թեթեւ մարմնամարդութիւն, թէ՛ մկանունքների ամրութեան և թէ՛ ախորժակ բանալու համար:

11) Վերջապէս ընթրելու սովոր - մարդիկ պէտք է բաւականանան թեթև ընթրիքով և այն՝ քնելուց գոնէ երկու ժամ առաջ:



Գ Լ Ո Ւ Ե Գ.

**ԴԱԾՏԱՆ: ՄԱՔՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:**

Այստեղ խօսքը կնոջ այն դրութեան մասին է, որ կոչուում է դաշտան: Լսենք, ինչ է ասում այդ մասին Մանտիկացան:

„Դաշտանի ժամանակ կինը պէտք է հանգիստ լինի, և համարէ, թէ ինքը հիւանդ է կամ հիւանդութիւնից նոր է ապաքինուում: Աֆրիկայի մի քանի մերձափնեայ երկրներում կանայք դաշտանի ժամանակ փակուում են առանձին խրճիթներում, այդ ժամանակ նրանց խտուրտ արգելուում է ազամարգիանց հեռ որեւէ շփում ունենալ, իսկ միջին Աֆրիկայի մի քանի երկրներում կանայք գանազան գոյներով ներկում են իրանց մարմինը, որպէսզի հասկացւի նրանց դրութիւնը և ոչ որ չմերձենայ նրանց: Հարաւային Ամերիկայում գրեթէ ամենուրեք կանայք դաշտանի ժամանակ երեսն ու ձեռները չեն բանում, և ինձամ-

քով հետևում են, որպէսզի ջրի կաթիլն անգամ չկաշի նրանց մարմնին: Նրանցից աւելի մարբասէրները տաք ջրով երբեմն լացուելը մեծ գոհողութիւն են համարում: Ծովային լողարանների փորձը ցոյց է տալիս, որ կանայք, եթէ չեն վախում, կարող են նոյն իսկ դաշտանի ժամանակ առանց վնասի լողանալ, կամ ամենաշատ երկու օր պէտք է սպասել, երբ արիւնհոսութիւնը աւելի սաստիկ է: Կանանցից շատերի դաշտանը սկսել է ծովային լողարաններում, իսկ դա մի ապացոյց է, որ սառը ջուրը դաշտանը չէ խանգարում, և վախկոտ կանանցից գուցէ շատերը համոզւեն, որ սառը ջուրը դաշտանի համար վնասակար չէ՞:

Գաշտանին վնասողը ոչ թէ մարբասիրութիւնն է, այլ ընդհակառակը անմարբասիրութիւնն ու կեղտը: Ռ՛վ է ապացուցել, որ սպիտակեղէն փոխելը վատ է ազդում դաշտանի վրայ: Եւ սակայն կանայք յամառութեամբ մնում են այն կարծիքին, թէ դաշտանի միջոցին սպիտակեղէնը, ինչ դրութեան մէջ էլ որ նա լինի, հարկաւոր չէ փոխել: Յիշատակենք, որ կանանցից շատերի դաշտանը տևում է 8-10 օր, նոյն իսկ է՛լ աւելի: Դիցուք՝ թէ սպիտակեղէնը փոխած է շաբաթուայ ոկգրին, իսկ դաշտանը սկսել է վերջին

օրը և տևում է—ենթադրենք—մի շաբաթ. այն ժամանակ նշանակում է, որ կինը ամբողջ երկու շաբաթ փոխնորդ չպէտք է փոխէ, իսկ այդ ժամանակամիջոցը բաւական է՝ զանազան հիւանդութիւնների միկրորների կանոնաւոր առաջ գալու համար: Մանտիդացան գտնում է, որ այդ անտարբերութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ ամօթխածութեան մի վսեմ արտայայտութիւն: Բայց մենք պէտք է ընդունենք, որ երբ ամօթխածութիւնը վնասում է առողջութեան, նա արդէն իսկական չափից դուրս է եկած: Եթէ կանայք ուզում են, որ դաշտանի ժամանակամիջոցը նրանց համար անթիւ տառապանքների անդրեր չգառնայ, նրանք պէտք է հոգ տանեն իրանց մարմնի մարբութեան վրայ, ինչպէս իրանց անտեսութեան մէջ են հոգ տանում մարբութեան և բարեկարգութեան վրայ: Ինքնին հասկանալի է, որ կինը դաշտանի ժամանակ լաւ չէ կարողանում զիմադրել արտաքին ազդեցութիւններին, բայց դրա միակ պատճառն այն է, որ նրանք առողջաբանական միջոցների զիմելը աւելորդ են համարում և իրանց գործարանները մարմնամարգոլութեամբ չեն ամրապնդում: Խելացի նախազգուշութիւնը մեծ նշանակութիւն ունի ներկայ դէպքում: Հոգեկան զգացմունքները

(վախ, երկիւզ, տրտմութիւն, ուրախութիւն), հոգեկան հիւանդութիւնները, վաւաշտ կենցաղը, յաճախակի կրկնուող սեռական գրգիւռը, գրգռիչ գրաւորներէ ընթերցանութիւնը, ծանախանութիւնը—այդ ամենը ահագին նշանակութիւն ունին դաշտանի ընթացքի վրայ և կարող են զգալի կերպով փոխել նրա տեսութիւնը, քանակութիւնը և սկզբնաւորութիւնը: Գրգռիչ պարագաները արագացնում են դաշտանի ընթացքը և շատացնում արիւնհոսութիւնը, իսկ հոգեկան ծանր յուզմունքները հակառակն են ազդում: Մի քանի բացառիկ դէպքերում դաշտանի սկզբնաւորութիւնն ու ընթացքը մի առանձին անհանգստութիւն չեն պատճառում, այնպէս որ կիրք նոր սկսող արիւնհոսութիւնիցն է միայն իմանում, որ դաշտանը սկսւում է: Սակայն մեծ մասամբ մինչև դաշտանի սկիզբ առնելը, տեղի են ունենում կանոնաւոր յաջորդականութեամբ մի շարք երևոյթներ, որոնք շարունակելով երբեմն համընթաց են լինում նաև դաշտանին: Այդ երևոյթների թւին պատկանում են այն ցաւերն ու ճլմկոտումները, որոնք տարութեան հետ միասին զգացւում են զօտկամէջքի և որովայնի կողմերում՝ մի տեսակ ճնշում միզելու ժամանակ, կկկանքի կանոնաւոր արտաքսման խանգարում

(մեծ մասամբ փորլուծութիւն), մի խօսքով այն բոլոր նշանները, որոնք խելոյն երևան են գալիս, հէնց որ բորբոքւած արիւնը կուտակոււմ է կոնքի գործարանների մէջ: Արեան շրջանաւորութեան մէջ կատարուող այդ փոփոխութիւնը ոչ միայն կոնքումն է նկատուում, այլև մարմնի միւս մասերում: Այդ է պատճառը, որ ստինքները ուռչում են և սկսում ցաւել, մարսողութիւնը խանգարւում է, արիւնը գլուխն է խփում և զլխացաւ պատճառում, կաշւի վրայ զանազան հիւանդութիւններ են երևան գալիս, ջղերը լարւում են և հոգեկան յուզմունքներ առաջ բերում: Այդ երևոյթները հանդէս են գալիս մէկիկ-մէկիկ, կամ մի քանիսը միաժամանակ: Ասածներս պարզ ցոյց են տալիս, որ դաշտանի ընթացքը միայն սեռական գործարաններով չէ սահմանափակւում, այլ նա իւր ազդեցութիւնը տարածում է նաև ամբողջ մարմնի վրայ, գցելով վերջնիս հիւանդոտ գրութեան մէջ: Գաշսանի ժամանակաւիջոցիկն ս ե ո ա կ ա և մերձառորոտիւն յպէճ է ունենալ: Գա կնոջ համար շատ փոանգաւոր է: Անփոանգ չէ նաև տղամարդու համար:

Եթէ դաշտանի ժամանակամիջոցին տղամարդը ոտնատակ տալով ամօթի զգացմունքը, յարաբերութիւն է ունենում իւր կնոջ հետ—նա իւր վարմուն-

քով ցեխոտում է ամուսնութեան ամբողջ պօէզիան
և զրկում է կնոջը այն փայլից, որ նրանց՝ որպէս
ամուսինների, այնքան անհրաժեշտ էր: Թողնելով մի
կողմ, որ այդ քայլը մի կատարեալ սրբապղծութիւն
է, պէտք է յիշել, որ դաշտանի ժամանակամիջոցին
ունեցած մերձաւորութեան հետեանքը կնոջ համար
վատ է լինում: Ինչպէս արգէն սօսացի, դաշտանի ժա-
մանակ կինը արտաքին ազդեցութիւնների զիմաց
աւելի զգայուն է դառնում. նրա ջգիւրը դաշտանի
յատկապէս բնախօսական ընթացքի շնորհիւ չա-
փազանց լարում են. մարմնի գործարաններից շա-
տերը լցւում են արիւնով և այդ բոլոր փոփոխու-
թիւնների վրայ պէտք է աւելացնենք նաև սեռական
զրգիւրը: Գաշտանի ժամանակ կնոջ կիրքը իւր ար-
տայայտութեան գազաթնակէտին է հասնում, և այդ
է պատճառը, որ կանանցից շատերը աշխատում են
հնար եղածի չափ ծածկել ամուսնուց իրանց զրու-
թիւնը, թէպէտև վերջը նրանք դառնապէս զոջում են
իրանց անմիտ արարմունքի համար: Ճիշտ է, ամու-
սինները մի առ ժամանակ կարող են անպատիժ
մեղանշել, բայց այդ կարճ ժամանակամիջոցը անց-
նելուն պէս, նրանք զգում են իրանց արարքի հետեան-
քը և կրում արժանի հատուցումն: Գաշտանի ժա-

մանակ տեղի ունեցած մերձաւորութիւնը յանկարծ
մի առ ժամանակ դադարեցնում է նրան. և արիւնհոսու-
թիւնը կանգ առնելուց՝ առաջ են գալիս արգանդի
ծակոցներ և ջղաձգութիւն, որից կինը կարող է
ջղաջնանալ: Բժիշկ Լօկօկը ասում է, որ յորդառատ
արիւնհոսութիւնը, տենդոտութիւնը, ջերմախտը,
հիատերիկան և նեարդահարութիւնը ուղղակի հետեանք
են դաշտանի ժամանակ տեղի ունեցած մերձաւորու-
թեան: Նրա վնասը ակներև է նաև արգանդի յա-
րատի բորբոքման համար, իսկ այդ վերջինը, ինչպէս
յայտնի է, մի հիւանդութիւն է, որ երկար տարի-
ներից ի վեր ծաղրում է ամենախոհուն բժշկութիւնն
անգամ: Եթէ երբեմն նկատւած էլ է, որ նման
մերձաւորութիւնից յվիութիւն է առաջ գալիս, այնու-
ամենայնիւ մեծ մասամբ բուրբովին հակառակին է
զիտւում, այն է՝ կինը անդառնալի կերպով կորցնում
է բեղմնաւորելու ընդունակութիւնը, իսկ երբ բեղ-
մնաւորութիւնը տեղի է ունենում, պտուղը սակաւ է
լրացնում իւր ժամանակը և շատ շուտով վիժւում է:
Գաշտանի ժամանակայ մերձաւորութիւնը տղա-
մարդին էլ վնաս է: Նրանից երբեմն միզանցքի բոր-
բոքումն է առաջ գալիս: Այրամուսնու սրբազան
պարտականութիւնն է՝ խնայել բարոյապէս իւր կնոջը:

Իսկ երբ ամուսինը թոյլ է տալիս իրան վիրաւորել կնոջ ամօթխածութիւնը, նա խլում է կնոջից այն յարգանքը, որը վերջնիս պարծանքն էր կազմում: Մեծ մասամբ այրամուսինը ստիպւած է լինում ինքն իրան մեղադրել, երբ նա իւր վարմունքները շնորհիւ գրկւում է կնոջ սիրուց և յարգանքից:

Գ Լ Ո Ւ Ե Գ.

ՍԵՌԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԵԱՆ
Մ Ա Ս Ի Ն:

Խօսելով ընդհանրապէս սեռական յարաբերութեան մասին՝ մենք պէտք է ընդունենք, որ խելացի մարդու համար այդ գործողութիւնը ոչ թէ նպատակ, այլ միջոց է՝ մի վսեմ նպատակի հասնելու համար: Այդ նպատակն է *որդեժնորքիւնը*, որի վրայ պէտք է կենտրոնանայ մարդու ամբողջ ուշադրութիւնը, եթէ նա ուզում է ապագայում երջանիկ լինել, որովհետև երջանիկ ապագան ամբողջապէս կախւած է առողջ և ուժեղ երեխաներից:

Սեռական յարաբերութիւն կամ մերձաւորութիւն ասելով մենք հասկանում ենք երկու սեռերի սերտ միաւորումը՝ մի նոր էակի կեանք տալու համար: Տղամարդի դերը այդ գործողութեան մէջ կայանում է նրանում, որ նա բեղմնաւորիչ հեղուկ է թափում, իսկ կնոջ դերը կայանում է այդ հեղուկը

ընդունելու մէջ: Մերձաւորութիւնը մի գորեզ զգացում է պատճառում, եթէ իհարկէ գործարանները հիւանդոտ գրութեան մէջ չեն: Տղամարդը այդ ժամանակ մեծ քանակութեամբ նեարդային հեղուկ է կորցնում, իսկ կնոջ կորուստը աւելի քիչ է լինում:

Մարդու սեռական կեանքը բաժանւում է երեք ժամանակաշրջանների՝ առաջինը տեւում է մինչև քսանհինգ տարեկան հասակը, երկրորդը՝ սեռական ոյժի ծաղկման շրջանը—տեւում է քսանհինգ տարեկանից մինչև քառասուն կամ քառասունհինգ տարեկան հասակը. երրորդը՝ սեռական քայքայման շրջանը տեւում է 40-ից կամ 45 տարեկանից մինչև 60 կամ 65 տարեկան հասակը: Ուրբեր առաջին երկու շրջաններում լաւ են պահել իրանց, նրանք բաւականաչափ ոյժ ունենում են նաև երրորդ շրջանում: Բերենք մի քանի կանոններ սեռական յարաբերութեան վերաբերեալ: Ծննդաբերական գործարանների ոյժը յարտու անելու համար երբէք չըպէտք է յոգնեցնել նրանց յաճախակի մարզութիւններով: Այդ գործարանների մասրորիւնը նրանց թարմութեան և առողջութեան համար անհրաժեշտ է. օրը մէկ անգամ նրանց պէտք է լանալ գոլ ջրով: Ամուսնական բաւականութիւններից պէտք է չափաւոր օգտուել: Այդ

բաւականութիւնները երբէք չպէտք է ի շարք գործ դնել, որովհետև նրանք գրգռում են մարմինը և անգրագանում մտաւոր ընդունակութիւնների վրայ: Խեղացի ամուսինները առանց գժարութեան կարող են համոզուել, որ սեռական ոյժի խնայողութիւնը կրկնապատկում է մերձաւորութեան հրապոյրը:

Սեռական յարաբերութիւնից լիուր բաւականութիւն ստանալու համար անհրաժեշտ է կատարել այդ գործողութիւնը ծածուկ, մի խաղաղ և հանդիստ տեղ: Վախը, աղմուկը, անմաքրասիրութիւնը այդ պահուն լուրջ խոչընդոտներ են հանդիսանում: Մինչև գործողութիւնն սկսելը՝ նախապէս պէտք է հայցել կնոջ համաձայնութիւնը ամենանուրբ խօսքերով և քեքշաբար տրամադրել նրան սեռական մերձեցման համար: Տղամարդը իւր ամուսնական պարտաւորութիւնը պէտք է կատարէ մեղմարար, հեղութեամբ և զգուշանայ՝ կնոջը որևէ անախորժութիւն պատճառելուց. այդ պահուն չպէտք է իտեպարի նման լափշտակել, որովհետև նման վարձունքի հետևանքը վատ է ազդում ծննդաբերական գործարանների վրայ և մինչև իսկ երբեմն ամուսինն է առաջ բերում:

Չպէտք է կնոջը յոգնեցնել յաճախակի գրկախառնումներով, այլ իսկոյն գաղարեցնել, ինչպէս այդ

բնութիւնն է պահանջում, և սպասել՝ մինչև կորցրած ոյժերի բնականօրէն վերականգնումը: V

Սիրային զրգուման հիացմունքները, զգայական տենչերի անյազ ցանկութիւնները, — սեռական ոյժի յարատևութեան ամենավտանգաւոր թշնամիներն են: Փոխանակ հեշտասիրական մտապատկերներով զըրգումն առաջ բերելու, խելացի տղամարդը պէտք է սպասէ՝ մինչև անդամի վերստին զարթնելը, երբ բնութիւնն ինքն է ստիպում նրան բաւարարութիւն գտնելու: Այդ միջոցը՝ տղամարդի արտադրող ընդունակութիւնների պահպանման ամենահաւաստի գրաւականն է: Ուտելուց յետոյ իսկոյն երբէք չպէտք է յարաբերութիւն ունենալ, որովհետև սերմնահոսութեան պատճառած ցնցումից կարող է մարսողութիւնը կանգ առնել, ստամոքսը ազտակալման վտանգին ենթարկւել, շնչարգելութիւն առաջ գալ և նոյն իսկ կաթւածահարել անհատին:

Տկարութեան կամ հիւանդութեան դէպքում անհրաժեշտ է խուսափել յարաբերութիւն ունենալուց, որովհետև դա հիւանդների և թոյլերի համար խիստ վտանգաւոր է:

Գլուխն ու ձեռները յոգնած ժամանակ սեռական յարաբերութիւնը պէտք է յետաձգել միւս օրուց,

որովհետև այդ գործողութեան պատճառած յոգնածութիւնն էլ՝ աւելի յոգնեցնում է առանց այն էլ յոգնած մարմինը: Թոյլ կուրծք ունեցողները, որոնք սովորաբար չափազանց սիրահարկոտ են լինում, պէտք է զսպեն իրանց, որովհետև սիրային ձգտումների ուժգնութիւնը նրանց առողջութեան համար վերին աստիճանի կորստաբեր հետևանքներ է ունենում:

Թէև կինը տղամարդից աւելի շատ կարող է կրկնել մերձեցման գործողութիւնը, բայց և այնպէս ժուժկալութիւնը նրան էլ անհրաժեշտ է, որովհետև անսանձ հեշտասիրութիւնը սկիզբ է դնում կանացի դանազան հիւանդութիւնների, օրինակ՝ վնասուում է ձւարանը, արգանդը և մանուանդ առաջ է գալիս *խաղցկեղ* (*ракъ*) կոչւած ամենքին յայտնի սարսափելի հիւանդութիւնը: Այն կերակուրներն ու խմիչքները, որոնք եռացնում են արիւնը և արագացնում նրա շրջանառութիւնը՝ յանկարծակի զրգում են անհատին, անկարութիւն առաջ բերում և թմրեցնում են նրա սեռական զգացմունքը: Այդ է պատճառը, որ սգելից խմիչքներն ու զրգուիչ կերակուրները ի շարք գործ դնող տղամարդիկ իրանց առնականութիւնը վաչ են կորցնում: — Վատ կենցաղը և օդու չափազանց գործածութիւնը նոյնպէս թուլացնում են ծննդաբերական ոյժերը:

Այրամուսինը երբ տեսնում է, որ կինը հիւանդ է, յոգնած է կամ հոգեկան վատ տրամադրութեան մէջ է, երբէք չպէտք է դիմէ նրան մերձաւորութեան համար և մանաւանդ չպէտք է պահանջէ նրանից այն, ինչ նա այդ բուռն անկարող է տալ: Եւ եթէ կնոջ համար այդպիսի մի անախորժ բուռն ամուսինը ոչ թող վերցնէ նրան և բեղմնաւորէ, — ապագայ էակի վրայ անխուսափելիօրէն պիտի ազդէ մօր տրամադրութիւնը: Երկարատե ժուժկալութիւնը նոյնքան վնասում է ամուսինների սեռական գործարանները, որքան և անսանձ հեշտասիրութիւնը, որովհետեւ թէ այս, և թէ այն առաջ են բերում անկարութիւն և սեռական թժրութիւն: Խելացի ամուսինները երբէք չպէտք է մինչև ինքնամոռացման աստիճանը անձնատուր լինեն սիրային դարձութիւններին կամ դիտմամբ խլացնեն իրանց մէջ այդ ցանկութիւնները: Սիրոյ գոհարանից հեռանալիս՝ նրանք պէտք է բաւականաչափ ոյժ անտեսած լինեն, որպէսզի կարողանան կրկնել այնտեղ իրանց գոհարերութիւնները: Յղիութեան ժամանակ լուրջ ուշադրութիւն է պահանջուում ամուսինները պէտք է ժուժկալեն յղիութեան առաջին երկու ամիսները, ապա՝ եօթներորդ ամսից մինչև ծննդաբերութիւնը:

Մօր և սաղմի շահերի տեսակէտից այդ խորհրդրդին անհրաժեշտ է հետեւել, որովհետեւ մերձաւորութեան շնորհիւ արդանդում առաջ եկած գրգիռները կարող են վնասել սաղմը և նոյն իսկ վիժում պատճառել:

Գրանք են ահա այն համառօտ կանոնները, որոնց պարտաւոր են հետեւել ամուսինները, եթէ ուզում են ունենալ առողջ և ամրակազմ դաւակներ և երկար ժամանակ ընդունակ լինել որդեծնութեան:



Գ Լ Ո Ւ Խ Ե .

**ՍԻՐԱՅԻՆ ՉԱՓԱԶԱՆՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ ՆՐԱՆՅ ՀԵՏԵՒԱՆՔԸ:**

Հիմա խօսենք սիրային չափազանցութիւնների
և նրանց հետեանքի մասին: Ինքնին հասկանալի է,
որ ամուսնութեան առաջին մի քանի շաբաթը ամու-
սինները՝ տիրանալով իրար՝ ձգտում են սիրոյ նորա-
նոր զարճութիւնների: Յերեկները նրանք մէկմէկու
հազար ու մի փաղարշանքներ են շռայլում: Բառերից
ու զգանքներից նրանց սիրան ու հոգին միանգա-
մայն ուժասպառ են լինում, մինչև որ հասնում է
գիշերը, երբ նրանք լիակատար բաւարարութիւն են
տալիս իրար: Այստեղ էլ հէնց թագնւած է առողջու-
թեանը սպառնացող վտանգը: Չափից դուրս տեղի
ունեցող փաղարշանքները զօրեղ կերպով վնասում
են ամուսինների առողջութիւնը և ամենից շատ
տղամարդի առողջութիւնը: Եւ դա կարող էլ չէ երկար
շարունակել: Զուտով կարիք է լինում զիմելու բժշկի

օգնութեանը և սովորաբար առաջինը տղամարդն է
զիմում: Դրա պատճառը հասկանալու համար՝ լսենք,
թէ ինչ է ասում Մանտիպացան իւր ,,Սիրոյ առող-
ջաբանութիւնը“ գրած քում: ,,Կնոջ կեանքը ամբող-
ջապէս կախած է իւր ամուսնու կեանքից: Եթէ կինը
ամուսնու պէս չէ գրգռւում, նա կարող է օրւայ ընթաց-
քում մի քանի անգամ յարաբերութիւն ունենալ և
միևնոյն ժամանակ չզգալ ոչ մի վնաս, բացի հեշ-
տոցի շփումից: Բայց նա էլ, ինչպէս տղամարդը,
կարող է թուլանալ և ուժասպառ լինել, եթէ մաս-
նակցէ իւր ամուսնու կրքին“:

Իւր վաղուցւայ երազած բաղդին արժանանալով
երիտասարդ ամուսինը անհաշիւ կերպով անձնատուր
է լինում կնոջ փաղարշանքներին ու զգանքներին և
միանգամայն մոռանում է, թէ որքան այդ վնաս է
նրա առողջութեան համար: Վերը արդէն յիշեցի, որ
կենդրոնական նեարդային համակարգութիւնը անմի-
ջական կապ ունի սեռական անգամների հետ, և
հէնց այդ կապն է, որ գտոնապէս զգալ է տալիս
տղամարդին, երբ վերջինս ի շարն է գործ դնում
սիրային բաւականութիւնները: Ամենից առաջ թու-
լանում են մտաւոր կարողութիւնները՝ յիշողութիւնը,
ուշադրութիւնը, մտածողութիւնը և մտաւոր աշխա-

տանքի պատճառով յոգնածութեան յաղթահարելու ընդունակութիւնը արագ ընկնում է: Սակայն երևակայութիւնը, պերճախօսութիւնը և երաժշտական զգացմունքը կարող են այդ միջոցին նոյն իսկ աւելի սաստկանալ, իսկ թուլանալու դէպքում՝ շատ աննշան չափով են թուլանում: Մարմնի ոյժերը նկատելիօրէն ընկնում են: Բոլոր զգացմունքները լարուած են և մեր առաջ պատկերանում է սեւամաղձոտի մէկը, որը անվերջ գանգատուած է զանազան ցաւերից: Նա իւր գլխի մէջ ցաւեր է զգում, նրա մարսողութիւնը խանգարուած է, կզկզանքը դէմ է ընկնում սրբանին և դուրս չէ գալիս: Մարմինը այգպիտով թուլանում է և կորցնում հիւանդաբեր ազդեցութիւններին դիմադրելու ընդունակութիւնը: Քթի, բերանի, աչքերի, աղիքների և ուրիշ շատ գործարանների մաղասային թաղանթի դուռը հալումաչ է անում անհատի առողջութիւնը և դո՛ս դարձնում նրան զանազան քայքայիչ հիւանդութիւնների՝ թորախտի, քաղցկեղի և տիրապետող համաճարակին:

Աւելորդ չէր լինի բերել այստեղ *Լեյկեմեալի* կարծիքը այդ հարցի վերաբերեալ: ,,Սեռական յարաբերութիւնները—ասում է նա— յաճախ պատճառ են դառնում ջղային քայքայումների, ուստի և հարկաւոր է

լրջօրէն կանոնաւորել այդ յարաբերութիւնները: Սեռական հակման անբնական բաւարարումը անխուսափելիօրէն վտանգ է սպառնում նեարդային համակարգութեան: Չափազանց գործադրութիւնը նոյնքան վնաս է, որքան և ժուժկալութիւնը: Սակայն ի՛նչ պէտք է հասկանալ ,,չափազանց գործադրութիւն“ ասեալով: Այդ հասկացողութիւնը որոշ նորմայի կենթարկել չէ կարելի և ներկայ դէպքում նա ոչ այլ ինչ է, բայց եթէ մի անհատական հասկացողութիւն: Մերձաւորութեան ընդունակութիւնը բոլոր մարդկանց մէջ միևնոյն աստիճանի չէ. այդ կողմից մարդիկ իրարից խիստ տարբերուած են: Մերձաւորութեան գործադրութիւնը կատարելուց յետոյ՝ իւրաքանչիւր մարդ ինքն իւր տրամադրութեանը նայելով կարող է որոշել՝ թէ երբ և որքան պէտք է նա ունենայ յարաբերութիւն: Եթէ մերձաւորութեան վերջը նա իրան վատ է զգում, այդ դէպքում նա պէտք է կամ բոլորովին հրաժարւէ յարաբերութիւն ունենալուց, կամ շատ սակաւ պէտք է օգտւէ նրանից: Բայց որպէսզի հիւանդը առանց վնասի և դժւարութեան կարողանայ պահպանել իրան պատկերած ժամանակաւոր կամ բացարձակ ժուժկալութիւնը՝ նա պէտք է հեռու լինի այն բոլոր պարագաներից, որոնք նպաս-

տում են սեռական զրգումանը: Ամուսինները պէտք է գատ-գատ քնեն, իւրաքանչիւրը առանձին սեռականում“:

Երկու սեռերին յատուկ հեղուկը ես դուր տեղը կորած եմ համարում, երբ նա վատնում է շնորհիւ չափազանց յաճախ կրկնուող թէև բնական յարաբերութիւնների շնորհիւ: Որքան սեռական հակումների չափաւոր բաւարարումը նպաստում է մարմնի կատարելագործման, նոյնքան և վնաս է նրան անչափաւոր գործադրութիւնը, և եթէ այդ չափազանցութիւնների հետևանքները այնքան էլ արագ երևան չեն գալիս և ոչ էլ սարսափեցնում են անհատին—այնուամենայնիւ՝ բացի տարիների կորուստից — որը տեղի չի ունենայ, եթէ այդ բնական կրքին զոյշ և չափաւոր կերպով աշխատեն բաւարարութիւն տալ — անհատը կորցնում է նաև մարմնի ոյժն ու թարմութիւնը և այդպիսով աղապայում զրկում է լիակատար հաճոյք ստանալու հնարաւորութիւնից: Բացի այդ՝ անչափաւորութիւնը ազդում է ոչ միայն մարմնի բնականուր կազմաւորին, այլև առանձին գործարանների, որոնք ամենաձանր տառապանքներ են պատճառում անհատին:

Ամուսնացած մի երիտասարդ զոյգ երկուսով

զիմել էին բժշկի օգնութեան. նրանց սեռական գործարանները՝ շնորհիւ անչափաւոր մերձաւորութեան, վատորակ արիւնհոսութիւնով էին հիւանդացել:

Նոյն հիւանդութիւնով տառապում են նաև նրանք, որոնք տառապում են հակաբնական սեռական սովորութիւններից: Սեռական չափազանցութիւնների անձնատուր եղածը հետևեալ նշաններն է ունենում վրան՝ արգանդի թուլութիւն, աչքացաւ, աչքերի շուրջը կապոյտներ, գլխացաւ, ստամոքսի և կրծքի ցաւեր մեղամաղձոտ տրամադրութիւն և այլն:

Յիշենք նորից, որ թէ՛ տղամարդը և թէ՛ կինը չպէտք է մոռանան, որ սեռական հեղուկը այն ժամանակ միայն կարելի է դուրս թափել, երբ նա բաւականաչափ կուտակւած է գործարանի մէջ: Ստորև կը խօսենք, թէ որքան յաճախ է հարկաւոր կրկնել սեռական յարաբերութիւնը, որպէսզի մեր մարմինը՝ փոխանակ թուլանալու այդ գործողութիւնից, քանի զնայ աւելի ամրապնդւի:



ՄԵՌԱԿԱՆ ԱՆԿԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ԻՔՐԵՒ ԶԵՏԵՒԱՆՔ
ՍԻՐԱՅԻՆ ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Թէն մերձեցման յաճախակիութեան վերաբերեալ նօրմա որոշել չէ կարելի, այնուամենայնիւ փորձը բաւական ճշգրիտ ցուցմունքներ է տալիս: Բժիշկ Փօփնկեզեանը իւր գրաւածքներէն մէկում ասում է: «Սիրային չափազանցութիւններին յաճախ հետևում են սեռական գործարանների գանազան հիւանդութիւններ, որոնց մէջ աչքի է ընկնում առաւելապէս սեռական անկարութիւնը: Բացի այդ՝ սեռական գործարանների միւս հիւանդութիւններն էլ քիչ չեն հիւժում մարդու կազմածքը. նրանք զլիսաւորապէս քայքայում են այն բոլոր գործարանները, որոնց ընդգրկում է կոնքը: Գուցէ շատերին իմ խօսքերը չափազանց տարօրինակ թւան և զրկեն նրանց հոգեկան արիւթիւնից, բայց և այնպէս նրանք միանգամայն ճիշտ են, որովհետև ես ասութիւններիս մէջ առաջ-

նորդում եմ իրական փորձերով: Բայց եթէ դուք, երիտասարդ այրամուտին, զիմելու լինէք ինձ՝ թէ ի՞նչ անէք, ի՞նչպէս կուէք չարիքի դէմ—այդ գէպըում ես միայն մի խորհուրդ կարող եմ տալ ձեզ՝. — անսանձ մի պահէք ձեր կիրքը մեղրամսին, որը այդպիսով բաւական երկար կարող է տևել. բաւարարէք ձեր ցանկութիւնը միայն այն ժամանակ, երբ պահանջը հարկադրական է, այսինքն, երբ ձեր անդամը ինքն իրան է կարծրանում՝ առանց որևէ գազանի մտապատկերների: Այդ գէպըում ստացած վայելքը փոխանակ յոգնեցնելու՝ կամրասնդի ձեզ: Իսկ յաջորդ առաւօտը, դուք կը բերէք ձեր գեռաւի կնոջը նոյն կաթոզին սէրը. այն ինչ դուք այդ անել չէք կարողանայ, եթէ մոլեգնաբար անձնատուր լինէք կրքին: Անշափաւորութիւնը միայն կարող է առաջացնել ձեր մէջ այն ճնշիչ գպացմունքը, որ կըբամորերի կողմից նօրմա է համարւում: Այդ գպացմունքը կայանում է նրա մէջ, որ ցոփակեացը ուժասպառ է լինում, մի բանից կարծես դժգոհ է, քէֆը վրան չէ և նոյն իսկ զգանք է տածում գէպի այն կինը, որը քիչ առաջ նրա հաճոյքի ազբիւրն էր հանդիսանում:

Ասում են, որ իւրաքանչիւր կենդանի մերձաւորութիւնից յետոյ տիրում է: Սակայն այդ յայտարարու-

թիւնը հալած իւրի տեղ չպէտք է ընդունել: Այդ տեսակ դէպքերում յանցանքի մի խոշոր մասը ընկնում է կանանց վրայ: Վատ հետեանքները նրանց վրայ էլ են անդրադառնում, ուստի և նրանք պարտաւոր են իրանց հերթին միջոցներ ձեռք առնել չափաւորութիւն պահպանելու համար:

Համաձայն սիրոյ կանոնադրութեան՝ մեզրամիտը տեսում է միայն չորս շարքով, բայց արդէն այդքան ժամանակն էլ բաւական է, որպէսզի ծագկափթիթ և առողջ տղամարդուց նրա սուտերը մնայ: Եթէ ամուսնական յարաբերութիւնների մէջ տիրապետում է փայփայանքը, թող տերապետէ նա. նա սիրոյ անհրաժեշտ կերակուրն է. ցուրտ է փշում այն ամուսնութիւնից, որից բացակայում են փայփայանքն ու փաղաքշանքը: Սակայն, դժբախտաբար կանայք—մանաւանդ հեշտասէր կանայք—չզիտեն այն վտանգը, որ նրանք պատրաստում են իրանց ամուսինների համար՝ անվերջ շուայելով նրանց իրանց փաղաքշանքները: Թող ամուսնու փիլիքական և հոգեկան գրութիւնից հասկանայ կինը, թէ մինչև որ աստիճան իրաւունք ունի ազատութիւն տալու իւր կրքին: Չպէտք է թողնուի, որ արդէն վայելած հաճոյքը նորանոր կրկնութիւններ պահանջէ: Այդ նկատմամբ

թող զանուգները երբ որ աչքները բաց են անում, տեսնում են՝ որ բանը բանից արդէն անցել է:

Ինչպէս արդէն ասացի, կինը չէ կարող բոլորովին անպատիժ կերպով հեշտասիրութեան անձնատուր լինել: Հեշտոցի, արգանդի և ձւարանների հիւանդութիւնները չափաւորութիւն են պահանջում նրանից: Ամենքին յայտնի փաստ է, որ հասարակաց կանայք: գրեթէ բոլորը հեշտոցի և արգանդի դում ունեն: Այդ բորբոքումները սովորաբար մեծամեծ տանջանքներ են պատճառում և թունաւորում են անհատի առօրեայ կեանքը: Կինը այդ դրութեան մէջ գրկում է մերձաւորութիւն ունենալու հնարաւորութիւնից, պատճառ՝ որ հեշտոցը ջգաձգաբար կծկում է ամենաչնչին շփումներն անկամ: Եւ սակայն այդ միայն բաւական է, կնոջ օրը սեանալու համար: Այդ տեսակ դէպքերում միշտ պէտք է շուտափոյթ դիմել բժշկի օգնութեան, որովհետև խելացի բժշկութիւնը առողջաբանական խորհուրդների հետ միասին մեծ օգնութիւն կարող է հասցնել:

Ամուսնական կեանքի սկզբում յաճախակի գործադրուող չափազանցութիւններից մէկն էլ *սեռական հակման արհեստական շարունակ* է: Գա համակրելի բայլ չէ, ուստի և մենք չենք կարող չգատապարտել

նրան: Երիտասարդը իւր պատանեկան տարիները անցրել է ողջախոհութեամբ և ժուժկալութեամբ, այսինքն խուսափել է անձնավաճառ կանանց հետ յարաբերութիւն ունենալուց: Բայց նա չէ կարողացել նոյն կամքի ոյժը երևան հանել նաև երազների մէջ, ուստի և նրա անտեսածը խել ևն նրանից երազխարութիւնները: Գուցէ երիտասարդը երկիւզ է կրել վարակիչ հիւանդութիւններից և՛ զսպելով իւր բնական հակումները, խուսափելով կանանցից՝ մտաւոր զբաղմունքի հաճոյքներն է միայն զերագասել նրանց: Ես չեմ ուզում ահաբեկել զազանի մոլութիւններով տառապողներին և չեմ գտնում, թէ նրանք ամենազբախտներն են մարդկանցից, ինչպէս հաւատացնում են շառլատան հեղինակները իրանց կեղծ բարոյական յայտարարութիւններով: Երիտասարդը վերջապէս ամուսնանում է: Նա իւր ամբողջ էութեամբ, մտքի և զգացմունքների ամբողջ թափով զբաղւած է ամուսնական առաջին գիշերւայ հեռանկարով: Նա դողդոզում է աւելի զգացմունքների լարումից, քան իւր մտքի:

Եւ ահա այն րոպէին, երբ նա մօտենում է իւր երագածը, իւր երջանկութիւնը իրականացնելուն՝ նախկին տարիների վարքը զգալ է տալիս իրան և

երիտասարդը չէ կարողանում կատարել իւր բնական պարտքը:

Սակայն մի վհատէք, երիտասարդ ամուսիններ, դուք դեռ ամեն ինչ չէք կորցրել և բժշկութեան վրայ կարող էք մեծ յոյս տածել: Բայց դուք, դաւնապէս խաբւածներդ, մուսլ մտքերի անձնատուր չպէտք է լինէք: Գառնազին զղջումը մի առանձին օգուտ չի բերի ձեզ: Գուք պէտք է անկեղծօրէն յայտնէք բժշկին ձեր ,,զազանիքները“ և հաւատարի լինէք, որ կապարիւնէք: Ես ասում եմ անկեղծօրէն պէտք է յայտնէք, որովհետև բժիշկները փորձից զիտեն, որ ոչ որ ճշմարտութիւնը նրանցից այնպէս չէ թաղցնում, ինչպէս սեռական հիւանդութիւններով տառապողները: Ամենակտրուկ կերպով նախազգուշացնում եմ ձեզ, ոչ այդպիսի դէպքերում ոչ մի պայմանով չպիմէք ընկերների կամ ծանօթների խորհուրդներին:

Խելացի բժիշկը շատ բաներում կարող է օգնել ձեզ՝ մի միայն նրան պէտք է հաւատար: Բայց առանց ընկերների կամ մի ուրիշի խորհրդին դիմելու էլ այբամուսինը նախապէս կարող է փորձել սեփական ջանքերով ազատուել իւր պակասութիւնից, գորացնել իւր կարողութիւնները: Գրա համար նա պէտք է այնպիսի կենսական պայմաններ ստեղծէ, որպէսզի

նրա մարմինը զնալալ ամրապնդելի, առողջութիւնը լաւանայ, որովհետեւ այն ամենը՝ ինչ որ նպաստում է մարմնի զօրանալուն, նպաստում է նաև սեռական ոյժի բարւոյրմանը:

Այդ պատճառով ես հարկ եմ համարում տալ այստեղ մի քանի խորհուրդներ՝ թէ ինչպէս է կարելի սեփական ջանքերով ազատել ստացական անկարութիւնից: Նախ և առաջ ես կարող եմ խորհուրդ տալ լինել միանգամայն շափաւոր, որովհետեւ առաջին անաջողութեանը կարող է հետեւել երկրորդը, երրորդը և աւելի: Ստէպ-ստէպ փորձերից բան չի գուրս գայ, այլ դրանից սեռական գործարանները աւելի ես կը թուլանան: Ճիւղերն ու փորձերը վերին աստիճանի սխալ և վտանգաւոր միջոցներ են: Հանդստութիւնն ու շափաւորութիւնը աւելի կարող են օգնել, քան բռնագրօսիկ արարմունքները: Իսկ եթէ կլինը խելացի և համբերող լինի — կարճ ժամանակամիջոցում կարելի է լաւագոյն հետեանքների հասնել:

Այստեղ կարելի է ուշադրութիւն հրաւիրել Մանտիգացայի հետեւեալ դարձւածքի վրայ՝ «Սեռական յարաբերութիւնը հպատակում է այն բոլոր օրէնքներին, որոնցով ամբողջ օրգանիզմն է կառավարում. երկարատեւ հանդստութիւնից և անդործու-

թիւնից նա թուլանում է, մինչդեռ իմաստուն գործադրութիւնից ոյժ է վաստակում»: «, Իմաստուն գործադրութիւնից — ասում է պրօֆէսօրը և գործի ամբողջ էութիւնն էլ այդ «, իմաստուն» բառի մէջն է պարունակում: Եթէ սիրաբորբոք այրամուսնուն առաջին փորձը չէ աջողում, նա կարող է մխիթարել լաւագոյն անպայայի հեռանկարով: Նա պէտք է սակայն խուսափէ փաղաքշանքներից և սիրոյ ուժգին արտայայտութիւններից, եթէ չէ ուզում վիրաւորել կնոջ զգացմունքները, որովհետև՝ որքան էլ օրինաւոր լինեն այդ հպումները, այնուամենայնիւ նրանք կարող են խլել նրանցից այն թափը, կներգեան, որ անհրաժեշտ է նրան գալիք մերձեցման համար: Մեծ չափով օգնում են առաւօտեան սառը ջրով շփումները և անձրևաբեր լողարանները, միայն հարկաւոր է շարունակաբար օգտուել դրանցից, մինչև ոյժերի կատարեալ վերականգնումը: Միևնոյն ժամանակ չափազանց օգտակար է մարմնամարզութիւնը թարմ օդում: Անաջողութիւն նախատեսող երիտասարդը լաւ կանի, եթէ ամուսնութեան առաջին ամիսը ճանապարհուի պէպի որևէ ծովափնեայ վայր, ուր կարող է միշտ ընդունել ծովային լողարաններ: Նկատուած է, որ այդ տեսակ բժշկութիւնը համարեա թէ միշտ

ցանկալի հետեանքներ է ունեցել, և վշտահար տղամարդը գտել է իւր կտրցրած ոյժերը: Բայց եթէ բնութիւնը անկարող է գիտուում մատուցելու նրան իւր ծառայութիւնները, այն գէպքում իհարկէ նա անյապապ պէտք է գիմէ բժշկին: *Ոյ ոք ինձն իւր գլխից չպէտք է օգտէ ժողովրդական զանազան միջոցներից, որոնք քննարկուած են համարում սեռական կիրք զարթեցնելու համար:* Այդ դեպքերի ներգործութիւնը վերին աստիճանի վտանգաւոր է, ուստի և ես անօգուտ և նոյն իսկ վնասակար եմ համարում յիշել նրանցից մի քանիսը: Այդ միջոցներին կարելի է գիմել մի միայն բժշկի թոյլտուութեամբ և նրա հսկողութեան տակ, հակառակ գէպքում մի շարիքը կարող է ծնել մի ուրիշը՝ աւելի սոսկալին: Անկարութեան երկրորդ տեսակը՝ առնանկամի չափազանց թոյլ կանգնումն է: Գրա պատճառները համարեա նոյնն են, ինչ որ առաջին տեսակիներ: Գրա էլ բժշկութիւնը պէտք է յանձնել բժշկին և ոչ մի ուրիշի:



Գ Լ Ո Ւ Ե Է.

ԽՈՐՀՈՒԳՆԵՐ ԿԱՆԱՆՑ՝ ԻՆՉՊԷՍ ԳՐԱԻՆԷԼ

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Ս Է Ր Ը:

Այժմ տանք մի քանի խորհուրդներ կանանց ինչպէս գրաւել ամուսնու սէրը:

Կինը մի վերին աստիճանի գեղեցիկ և ^{սուղալի} ~~արարած~~ է. այդ մասին խօսք անգամ վինել չէ կարող: Բայց և պէտք է իմանալ, որ մաքրասիրութիւնը ոչ որից այնպէս խստիւ չէ պահանջուում, ինչպէս կնոջից: Ժան ժակ Բուսսօն ասում է, որ անմարդասէր կնոջից աւելի զգուշի բան չկայ աշխարհումս, և յաճախ տղամարդը միանգամայն իրաւացի կերպով խուսափում է նրանից: Կնոջ անվիթութիւնը գէպի իւր հազուտան ու մարմինը զգանք է առաջացնում ամուսնու մէջ և ստիպում է նրան ընկնել կողմնակի, աւելի գրաւիչ կանանց ետևից: Ամուսնական երջանկութեան և փոխազարձ սիրոյ խախտման առաջին առիթն է դա:

Բաւական չէ լինել միայն բարի, քաղաքավարի, քնրչաբարոյ: Այրամուսնու համակրանքը պահպանելու համար անհրաժեշտ է երևալ նրա առաջ մարուր և կռիկի հագնւած: Այդ անհրաժեշտութիւնը նրանով է բացատրուում, որ արտաքին գեղեցկութիւնը՝ միացած մաքրասիրութեան, նրբաճաշակ հագուստի և թեթիկ հոկետութեան հետ, զօրեղ կերպով նպաստում է սիրոյ տեսկանութեան, բոցավառում է նրա հետ կապւած ցանկութիւնները և հաստատապէս գրաւում է տղամարդուն գէպի իւր կիներ: Ո՞ր կիներ չգիտէ, որ այդ այդպէս է: Եւ սակայն կանանց մեծամասնութիւնը՝ հասարակութեան մէջ դուրս գալիս, ահազին ժամանակ է գործ դնում պճնւելու և զարդարւելու համար, այն ինչ մի բոպէ անգամ չեն հոգում այդ մասին, երբ տանն են գտնւում: Այստեղ նրանք ,,տնավարի“ են պահում իրանց, հագնւում են անխնամ, անճաշակ զգեստներ, որից պարզ երևում է, որ նրանց համար միևնոյնն է՝ դժուր են գալիս նրանք իրանց ամուսիններին, թէ ո՞չ: Կանանց այդ սովորութիւնը վտանգաւոր չհամարել չէ կարելի: Սկզբում ամուսինը կը կարծէ, թէ կիներ ուզում է գուր գալ աւելի ուրիշներին, քան նրան: Իսկ յետոյ՝ հանդիպելով հասարակութեան մէջ պճնազարդ կանանց՝ նա

միևնոյն բանն է զգում, ինչ որ ուրիշ տղամարդիկ՝ տեսնելով նրա կնոջը միայն զարդարւած: Ի վերջոյ այրամուսինը անտարբեր է դառնում գէպի իւր կիներ և այդպիսով ամուսինները միանգամայն սառչում են իրարից:

Ուրեմն՝ մաքրասիրութեան և կանոնաւոր հագուստի մասին կիներ սրբան շատ հոգայ, այնքան լաւ նրա համար:

Ֆիզիքական գեղեցկութեան վերաբերեալ կանոնները յիշելուց յետոյ՝ թւինք հոգեկան յատկութիւնը, որոնցից կախւած է կնոջ ամբողջ հրապոյրն ու արժանաւորութիւնը: Գրանք են՝ ողջախոհութիւն, աշխատասիրութիւն, հնազանդութիւն, հեզութիւն, համեստութիւն, քաղաքավարութիւն և այլն:

Կնոջ առաջին հոգսը պէտք է լինի այն, որ նա միշտ և ամենուրեք հանդիսանայ իրրի կին և տղամարդի իրաւունքներին երբէք ձեռնամուխ չլինի: Այդպիսի կիներ սակայն չէ գրկւում կանանց իրաւահաւասարութեան համար կուելու հնարաւորութիւնից: Առնական բարք ու վարքի և ճաշակի տէր կիներ չբպէտք է մտածէ ամուսնութեան մասին: Ընտանեկան ընդհարումներին տեղիք չտալու համար կիներ պէտք է զսպէ իւր կամակորութիւններն ու քմահաճոյքները,


որոնք ստեղծում են հակառակութիւններ, վէճեր, կռիւններ և ընտանեկան խաղաղ կեանքը միանգամայն խանդարում են: Ամուսնական կեանքի մէջ շափաղանց վտանգաւոր թշնամիներ են կնոջ հետաքրքրութիւնը, թեթեամտութիւնը, խանդոտութիւնը, ուստի և հնար եղածի շափ հարկաւոր է խեղդել, այդ գլխացմունքները: Ամուսնացած գեռատի կինը պէտք է խոյս տայ երեակայութիւն վառող սանտիմենտալ վէպերից. գրգռւած երեակայութեան տէր կինը շատ յաճախ ձգտում է իրականացնել իւր աննշերը և իհարկէ՝ բացի հիասթափութիւնից և յուսահատութիւնից, ուրիշ ոչինչ չէ գտնում:

Պարահանգէսներն ու անբարոյական պիեսաների ներկայացումները խիտ անցանկալի ուղղութիւն են տալիս կնոջ բնուարութեանն ու հակումներին: Կնոջ բարոյականութեանն ու ողջախոհութեանը ահագին հարւած են հասցնում այդ տեսակ պիեսաները, որոնք ծագում են խարւած ամուսիններին և նկարագրում տարտիւֆներին ու երես առած կնամոլներին: Եթէ կինը սիրում է իւր ամուսնունն ու գաւակներին, եթէ կնահատում է իւր ընտանեկան օջախը և ցանկանում է հաւատարիմ մնալ գրած ուխտին՝ նա պէտք է լուրջ կերպով ի նկատի առնի այդ շարիք-

ները և հեռու պահէ նրանցից իւր ընտանեկան երջանկութիւնը:

Կինը ամուսնուց ոչինչ չպէտք է ծածկէ, ոչ մի դադունիք չպէտք է ունենայ նրանից—այլապէս ամուսինը կը կորցնէ իւր հաւատարմութիւնը դէպի նա, հէնց որ իմանայ՝ թէ մի փոքրիկ բան իսկ թաղցրած է իրանից: Նրա հոգու մէջ սկիզբ կը դնի կասկածը, ապա և խանդը, որը թէ ինչ հետեանքների է հասցնում, ամենքին յայտնի է:

Վերջացնելով պէտք է աւելացնեմ, որ մտերմութիւնը, սէրը, յարգանքը, մշտական հաւատարմութիւնը, ուշադրութիւնը—այդ ամենը կնոջ ձեռքին կարող է ծառայել իբրև մի հզօր գէնը, որով նա հեշտութեամբ կը նւաճէ ամուսնու սէրը և ընտանեկան իսկական երջանկութիւնը:





Գ Լ Ո Ւ Խ Ը.

Խ Ո Ր Հ Ո Ի Ր Դ Ն Ե Ր Տ Չ Ա Մ Ա Ր Դ Կ Ա Ն Յ

Ամուսնացած տղամարդու ամենապլխաւոր պարտականութիւններից մէկն է՝ կնոջ բնաւորութեան և հակումների ուշադրութեամբ և եռանդազին ուսումնասիրելը, թէև այնքան էլ հեշտ գործ չէ սա: Ամուսինը պէտք է աշխատէ զարգացնել կնոջ զգացմունքներն ու համակրանքը և ներդաշնակութիւն մտցնել երկուսի էլ ճաշակների մէջ:

Երբեմն կինը յամառ է և բարկացկոտ: Նա կարող է բարկանալ, բորբոքւել առանց որևէ պատճառի: Ամենաշնչին առիթն անդամ կարող է զօրեղ ցասմունք և սաստիկ փոթորիկ առաջ բերել նրա մէջ: Խելացի ամուսինը այդպիսի դէպքերում պէտք է զիջող վերաբերւի. փոթորիկը կ'անցնի՝ և կինը բացի երախտիքի և յարգանքի զգացմունքից, ուրիշ ոչինչ չի տաժի դէպի իւր ամուսինը: Կնոջից շատ բան շպէտք է պահանջել, և միշտ պէտք է զիջող լինել դէպի նա,

թէկուզ հէնց այն պատճառով, որ տղամարդը նրանից և աւելի ուժեղ է, և աւելի կատարեալ:

Ով ուզում է ուղղել իւր կնոջ պակասութիւնները, նա պէտք է առաջ իրանը ուղղէ, որպէսզի օրինակ ծառայէ իւր կնոջ համար: Ամուսինը կնոջ հետ պէտք է համեստօրէն վարւի, որովհետև գոուողութիւնն ու պահանջկոտութիւնը սառցնել միայն կարող են կնոջը: Ուստի և կնոջ իւրաքանչիւր կարծիքին ուշադրութեամբ է հարկաւոր վերաբերւել և տղամարդը չպէտք է ճնշէ նրան իւր մտաւոր գերազանցութեամբ: Կինը վիրաւորում է, երբ նրա կարծիքներին անփոյթ են վերաբերւում, և նա մտադրում է այսպէս թէ այնպէս վրէժխնդիր լինել տղամարդից:

Կոպիտ հայհոյանքները ծանրապէս ցաւեցնում են կնոջ սիրտը: Տղամարդը չպէտք է թայլ տայ իրան հայհոյել կնոջը, այլապէս նա կը զգայ կնոջ վրէժխնդրութեան ամբողջ ծանրութիւնը: Կնոջ զրգանքներին ու փաղաքշանքներին պէտք է միևնոյն եղանակով պատասխանել, նոյն իսկ աւելի ուժեղ զգացմունքներով: Պէտք է ընտելացնել կնոջը պարզ և առողջ զարճութիւնների: Իսկ ինչ վերաբերում է սիրային հաճոյքներին—չպէտք է մոռանալ, որ դա մի քնրոյշ ծաղիկ է, որի բոյրը սակաւ և չափաւոր

պէտք է ներշնչել, ապա թէ ոչ՝ հոտառութեան
զգացմունքը կը թմրի և ծաղիկը բոլորովին կը դադարէ
բուրելուց:

Այրամուսինը ոչ մի ջանք չպէտք է խնայէ
խանդից խուսափելու համար: Ամենափոքրիկ կաս-
կածը, որ թոյլ է տալիս իրան տղամարդը, ընդմիշտ
թուլանում է նրա հանգստութիւնը, ընդմիշտ խոր-
տակում է նրա բաղդը, որովհետև չկայ ոչինչ այն-
քան տանջալից, այնքան սարսափելի, այնքան կոր-
ստաբեր—որքան խանդի զգացմունքն է: Նա նոյն
խակ աւելի ուժեղ է, քան ինքը սէրը: Եթէ ամուսինը
կասկածելու որոշ հիմքեր ունի, նա պէտք է կնոջից
միանգամայն ծածուկ նախազգուշութեան միջոցներ
ձեռք առնէ և հեռու լինի կնոջ բարոյական զգաց-
մունքները վիրաւորելու մտադրութիւնից: Մի՛ օգուէք
ոչ ձեր խորամանկութիւնից, ոչ էլ խելքից, որով-
հետև ծիծաղելին ամենքի աչքում վերջիվերջոյ դուր
ինքներդ կարող էք դուրս գալ:

Ձեր կնոջ ներկայութեամբ տաղտկութեան նշան-
ներ մի՛ ցոյց տւէք, մի՛ յօրանջէք, մի՛ ճրվիրուէք,
որպէսզի նրանք չկարծեն, թէ արդէն ձանձրացրել են
ձեզ: Բոլոր մոլութիւնների մայրն է՝ ծուլութիւնն ու
պարապութիւնը, և ձեր պարտաւորութիւնն է գերծ

պահել կնոջը այդ շարիքից, նրա մտքին որոշ ուղղու-
թիւն տալ և դտնել նրա համար մի համապատասխան
հաճելի զբաղմունք:

Եթէ ձեր կնոջ սէրն ու ընտանեկան երջանկու-
թիւնը թանգ էք գնահատում՝ պէտք է վերին աս-
տիճանի զգոյշ լինէք, ձեր ամուրի—բարեկամների
ընտրութեան մէջ: Նրանց բերեկամական հաւատա-
ցումների ու ազնիւ խօսքերի տակ յաճախ ամենա-
կեղտոտ միտումներ են լինում թաղնւած:

Կնոջը պէտք է հեռու պահել տարիքն անցրած
պառուած կանանցից, որոնք իրանք բոլոր երկըր-
պագուններին կորցրած՝ իրանց միակ հաճոյքը անվերջ
ասէկօսէների և սրան-նրան քննադատելու մէջ են
գտնում: Այդպիսի կանայք ընտանեկան օջախի իս-
կական թշնամիներն են հանդիսանում, և նրանց
լեզուի թոյնից դուր վազ թէ ուշ վնասուելու էք:

Կնոջ ողջախոսութիւնը սիրողն ու գնահատողը
ինքն էլ պէտք է այդպէս լինի թէ՛ խօսքով և թէ՛
գործով: Երբեմն ընտանեկան տարաձայնութիւններից
խուսափելը անհնարին է լինում, և հէնց այստեղ են
հարկաւորում զգուշութիւնն ու խաղաղասիրական
ջանքերը: Չպէտք է բանը այն տեղը հասցնել, որ
կինը գնայ ուրիշներին հաւատայ իւր դարդերը: Նրա

այդ քայլը ընտանեկան երջանկութեան խորտակման սկիզբն է, պատճառ՝ որ կողմնակի կիներ իւր խորհուրդներով բոլորովին կը փշաջնէ ձեր կնոջ, իսկ հաւատարմատար տղամարդը սկզբում կը դառնայ նրա մխիթարիչը ապա և սիրահարը: Այո, զգուշանաք պէտք է այդ զրույթիւնը ստեղծելուց, ապա թէ ոչ, կը կտրցնէք և՛ սէր, և՛ ընտանեկան օջախ, և՛ կին: Այն ժամանակ ձեզ միայն մի անելիք կը մնայ՝ հեռու փախչել ձեր ընտանիքից, չտեսնել երեսը այն կնոջ, որը փոխանակ սիրելու ձեզ, սիրում և պատկանում է ուրիշի: Այդ մասին պէտք է որքան կարելի է վազուօք մտածել, քանի դեռ ուշ չէ, իսկ բաժանելիս դանազան ազմուկների տեղիք չպէտք է տալ:



Գ Լ Ո Ւ Ե Թ.

Բ Ե Չ Մ Ն Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ե Ա Ն Մ Ա Մ Ի Ն

Այժմ բացատրենք, թէ ինչպէս է կատարուում բեղմնաւորութիւնը: Գիտութիւնը վաղուց արդէն գտել է և սպաջուցել, որ իւրաքանչիւր կենդանի էակ առաջ է գալիս ձւից: Կինը, ինչպէս և կենդանական աշխարհի բոլոր էզերը, ձւեր է արտադրում գաշտանի ժամանակամիջոցին: Կնոջ ձւարանները մի-մի գեղձեր են, առանց որոնց ձուն չի կարող արտադրել: Մանրադիտակային ձւերը փունջ կազմած զարգանումտուղում են իրարից անկախ կերպով բոլորովին զարգացածները հասած պտուղների նման պոկուում ընկնում են այն խողովակի մէջ, որը տանում է նրանց ձւարաններից դէպի արգանդը: Հասունացած ձուն խողովակի թոյլ կծկումների շնորհիւ դանդաղօրէն դիմում է դէպի արգանդը, ուր և հասնում է մօտաւորապէս 4-5 օրւայ մէջ: Արգանդի մէջ ընկած ձւի վերաբերութեամբ տղամարդը հետեւեալ դերն ունի

կատարելու: Մերձաւորութեան միջոցին առնական սերմը ուժեղ կերպով ցայտում է արզանդի մէջ: Այստեղ սերմի մէջ վխտող անհամար գիսաւոր *սերմնակենդանները* մրցելով իրար հետ ձուն են որոնում: Նրանցից միայն մէկը և այն՝ ամենաուժեղն ու ճարպիկը կարողանում է ճեղքել գտած ձուն և մտնել նրա մէջ: Չուն այդպիսով բեղմնաւորւում է, դադարում է այլևս թափառելուց արզանդի մէջ, ամբանում է այնտեղ շնորհիւ այդ պահուն առաջացած արմատների և նոր էակի կեանքը այդ վայրկեանից սկիզբ է առնում: Բեղմնաւորութեան հինգերորդ ամսին սաղմը հաւկիթի մեծութեան է հասնում և հազիւ է տեղաւորւում արզանդի մէջ. ուստի և յետագայում պտղի մեծանալուց արզանդի խոռոչը հետզհետէ լայնանում է մինչև ծննդաբերութեան օրը:

Գ Լ Ո Ւ Ե Ժ.

ԲԵՂՄՆԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բազմաթիւ փորձերն ու խոշորացոյցի արած ծառայութիւնները բեղմնաւորութեան հետ կապած երևոյթների վերաբերութեամբ՝ մեզ հարկադրել են անել հետեւեալ եզրակացութիւնները՝

1) Բեղմնաւորութիւնը ձւարանում տեղի ունենալ չէ կարող, իսկ եթէ սակաւ դէպքերում ունենում էլ է՝ դա դիպւածային երևոյթ է:

2) Բեղմնաւորութիւնը նոյնպէս տեղի ունենալ չէ կարող այն ձւերի վրայ, որոնք իրանց արտադրութեան ժամանակամիջոցին ընկած են արզանդի խորքերում, որովհետև այդտեղ ձւերը բեղմնաւորութեան համար անհրաժեշտ պայմաններում չեն գտնւում: Նպատակայարմար բեղմնաւորութիւնը կատարւում է մի միայն այն ժամանակ, երբ ձուն գտնւում է ձւատար խողովակի մէջ և զրեթէ արզանդին հասած: Այդ տեսակ բեղմնաւորութիւնը փոփոխութեան է

ենթարկում ձևի գոյութեան միջոցները հնգապատիկ մեծացնում է ձուն և օժտում է նրան արգանդի պատերին կաշեղու յատկութիւններով:

3) Խոզովակի մէջ բեղմնաւորութիւնը կատարւում է հետևեալ կերպով՝ սերմնային հեղուկը մտնելով արգանդը այնտեղ լուծւում է: Նրա ջրային մասը արտաթորւում է, իսկ միջի սերմնակենդանները—գոնէ նրանց մեծ մասը—բնազգաբար դիմում են դէպի ձւատար խոզովակները, կաշում են նրանց պատերին և մնում այդ գրութեամբ 5-10 օր՝ նայած նրանց առողջութեանն ու զանազան ներքին հանգամանքներին, որոնք կարող են սպրեցնել կամ սպանել նրանց:

4) Ձուն խոզովակի վերին մասով անցնելու միջոցին պատահում է սերմնակենդանուն, որը մտնելով նրա մէջ, բեղմնաւորում է նրան:

5) Բեղմնաւորութիւնը սովորաբար տեղի է ունենում ամսական արիւնհոսութեան ժամանակ, կամ մի քանի օր յետ ու առաջ: Այն ըստ էից, երբ ձւաբանը փակւում է և ձւատար խոզովակը դադարում է ձւարանի հետ հաղորդակցութիւն ունենալուց, բեղմնաւորութիւնը անհնարին է դառնում:

Ձւարանի արտադրած ձւերը աստիճանաբար

հասունանում են, և դա ոչ մի կախումն չունի սերմի մերձաւորութիւնից: Հասունացած ձւերը բնական ճանապարհով կտրւում են ձւարանից և ընկնում դէպի արգանդը տանող խողովակների մէջ: Այդ միջոցին սեռական գործարանների ներսը ուռչում է, որի հետևանքը դաշտանն է: Եթէ արգանդը հասած ձուն բեղմնաւորած է, նա իւր համար մի պատուարան է գտնում, կաշում է արգանդի պատին և այդ դիրքի մէջ ենթարկւում է մի շարք փոփոխութիւնների, որոնցից ամենավերջինը լոյս-աշխարհ գալն է մի էակի, որը նման է իւր արտադրողներին: Իսկ եթէ արգանդի մէջ ընկած ձուն բեղմնաւորած չէ, այդ դէպքում նա լուծւում է և արգանդային արտաթորանների ու արեան հետ միասին դուրս է շարտւում: Յայտնի բնախօսներից ոմանք ասում էին, որ բեղմնաւորութիւնը ամսւայ իւրաքանչիւր օրը կարող է տեղի ունենալ. բայց դա կատարեալ մոլորութիւն է. նոյն իսկ աւելին՝ միանգամայն անհնարին մի բան: Դրա համար կան երեք ազայոյցներ:

1) Մարդկային ձուն ամիսը միայն մէկ անգամ է կատարեալաբար հասունանում: Բեղմնաւորութեան համար նա պէտք է բոլորովին հասունացած լինի:

2) Մինչև ձևի հասունանալը ձւարանը ձւատար


անցքերի հետ հաղորդակցութիւն չունի:

3) Այդ հաղորդակցութիւնը սկսում է միայն այն ժամանակ, երբ հասունացած ձուն ձւարանից շարժւում է դէպի արգանդը:

Ուրեմն բեղմնաւորութիւնը ամուսյ բոլոր օրերին հնարաւոր լինելու համար հարկաւոր է, որ ձւարանում ամեն օր հասունացած ձու լինի, սակայն այդպիսի բան երբէք չի պատահում: Անհրաժեշտ է նաև, որ ձւարանի և արգանդի մէջ մշտական հաղորդակցութիւն լինի. դա նոյնպէս գոյութիւն չունի: Բացի այդ՝ ձւարանից դուրս եկած հասունացած ձուն պէտք է երկար մնար կամ խողովակների մէջ, կամ արգանդի մէջ, այն ինչ այդ էլ տեղի չէ ունենում: Չբեղմնաւորւած ձւերը արգանդում մնալ չեն կարող, որովհետև նրանք այնտեղ արմատներ չեն բռնում, այլ ինչպէս ասացինք, շատ շուտով դուրս են շարժւում: Հետևապէս այդ բնախօսների ենթադրութիւնները միանգամայն անհիմն են: Բեղմնաւորութիւնը կարող է կատարւել հէնց այն օրը, երբ հասունացած ձուն հեռանալով ձւարանից դիմում է խողովակներով դէպի արգանդը: Այդ է ահա մարդածընութեան գաղտնիքը:

Կանանց մեծ մասը ոչ մի տեղեկութիւն չեն

ունենում, երբ նրանց արգանդում բեղմնաւորութիւն է կատարւում. այդ մասին նրանք իմանում են միայն դաշտանի ժամանակամիջոցին, երբ արիւնհոսութիւն տեղի չէ ունենում: Բայց կան կանայք, որոնք բեղմնաւորելու րոպէին զգում են մի չափազանց հաճելի ցնցմունք, որ վայրկենապէս տարածւում է նրանց ամբողջ մարմնի մէջ:



Յ Ղ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Կնոջ մայրական պարտաւորութիւններն ու հոգատարութիւնը սկսում են բեղմնաւորութեան վայրկեանիցն և եթ, որովհետև կինը հէնց որ իմացաւ, թէ ինքը յղի է—նա այլևս ինքն իրան չէ պատկանում: Յղիութեան ընթացքում նա իւր կեանքի իւրաքանչիւր բոպէն պէտք է նւիրէ պտղին, որին կրում է իւր արգանդում. ուրիշ խօսքով՝ յղի կինը պէտք է հրաժարէ աշխարհիկ ազմկալից կեանքի զւարճութիւններից, պարահանդէսներից, թատրոններից, ասո-նախմբութիւններից, զբօսանքներից, ուր խաճում են մարդիկ հոծ բազմութեամբ, վերջապէս այն ամե-նից, ինչ որ յոգնեցուցիչ է: Բնութիւնը նրան մայր է դարձրել, տալով այդպիսով նրան մի նոր երջանկու-թիւն: Կինը բացառապէս պէտք է ապրէ մանկիկի համար, որը շուտով շարժւելու է նրա արգանդում: Բոլոր կանայք տենչում են ունենալ գեղեցիկ և առողջ

զաւակներ, և դա մի շատ բնական տենչանք է: Սա-կայն այդ բազմաւոր նպատակին հասնելու համար պահում են արդեօք իրանց աշխարհիկ կանայք այն-պէս, ինչպէս հարկն է: Գժբազդաբար՝ ոչ: Նրանց մեծագոյն մասը շարունակում է նոյն կենցաղը, ինչ որ և յղիութիւնից առաջ: Նրանք նոյն զւարճութիւն-ներն են վայելում, նոյն քէֆերը քաշում: Գերազնիւ տիկնայք, միթէ դուք չգիտէք, որ սազմն ու մայրը միևնոյն կեանքով են ապրում, մի ամբողջութիւն են կազմում և որ մօր իւրաքանչիւր յուզմունքն ու յոգ-նածութիւնը անդրադառնում է զաւակի քննոյշ օր-գանիդմի վրայ: Միթէ դուք չգիտէք, որ գօրեղ յուզ-մունքները կարող են պատճառ դառնալ մանկիկի ան-կանոն զարգացման: Թոյլ և հաշմանդամ մանուկը մի կատարեալ գժբազդութիւն է ծնողների համար, այդ այդպէս է: Բայց ինչ է այն խեղճ արարածի մեղքը, որը իւր ամբողջ կեանքը տանջանքներով պիտի անց-կացնի՝ շնորհիւ իւր ծնողների վնասակար սովորու-թիւնների: Յղիութեան սկզբնաւորութիւնիցն և եթ խելացի կինը պէտք է մոռացութեան տայ կօրսետը և զէն ձգի իւր այն զգեստները, որոնք ճնշում են գործ դնում իրանի և որովայնի վրայ: Նրա հագուստի ձևը պէտք է կատարեալ ազատութիւն տայ մարմնին,

որի ծաւալը հետզհետէ մեծանում է՝ սաղմի աճման պատճառով: Եթէ մայրը գործ դնէ մի քանի առողջաբանական հոգատարութիւններ և նախազգուշացումներ, ուշք դարձնէ իւր հոգեկան և ֆիզիքական հաւասարակշռութեան վրայ—նրա ջանքերի հետեանքը կը լինի հեշտ ծննդաբերութիւն և առողջակազմ դաւակ:

Հնում հռովմէուհիները կրծքներին գօտիներ էին կապում՝ ստիներները հաւաք պահելու համար, բայց յղիութեան ժամանակ օրէնքը գրամական տուգանքի և բանտարգելութեան սպառնալիքների տակ պարտաւորեցնում էր նրանց թողնել այդ գօտիները: Լիկուրգոսը նոյնպէս հրամայել էր կանանց՝ յղիութեան առաջին նշանները երևալուն պէս հագնել լայնարձակ զգեստներ առանց գօտիների և զանազան կապերի: Յղիութիւնը սովորաբար երկու շրջանի են բաժանում: Առաջինը տևում է չորս ամիս, երկորդը՝ հինգ: Առաջին շրջանի ընթացքում կինը յաճախ գիրանալու հակումներ է ցոյց տալիս, պատճառ՝ որ ամսական արիւնհոսութիւնը գաղաբած է լինում: Եթէ կանայք ըստ սովորութեան առաջւայ պէս շարունակում են ուտել-խմել, այդ գիրութիւնը կարող է շնչարգելութիւն առաջ բերել. այդ դէպքում միակ

միջոցն է՝ արիւն բաց թողնելը: Սակայն ամենիմաստ բնութիւնը համարեա միշտ շտապում է հասցնել իւր օգնութիւնը և ուզղել շատ անմիտ սխալներ: Չափից դուրս շատ ուտող-խմող յղի կնոջ սիրտը միշտ խառնում է, նա շուտ-շուտ վախում է և այգպիտով ստամոքսը ազատում է նրա մէջ կուտակւած աւելորդ և անօգուտ կերակուրից: Ուրիշ դէպքերում կնոջ ստիպում են կանոնաւոր և խելացի կենցաղ վարել մի քանի թեթի տկարութիւններ, ինչպէս օրինակ՝ գլխացաւ, յաճախակի փորլուծութիւն, ախորժակի պակասութիւն և այլն: Բնութիւնը իւրաբանչիւր գործարան օժտել է առանձին բնազգով. նրա այդ գարմանալի նախատեսութիւնը սովորաբար առանց բժշկի օգնութեան վերականգնում է կեանքի ընդհանուր անտեսութեան մէջ հարկաւոր հաւասարակշռութիւնը:

Յղիութեան առաջին ամիսները կանայք ենթակայ են լինում բազմաթիւ թեթի քայքայումների, ինչպէս են օրինակ՝ ուշաթափութիւն, յոգնածութիւն, անքնութիւն, ստամոքսի թուլութիւն, ուժասպառութիւն, մարսողութեան խանգարումն և այլն: Այդ բոլոր խանգարումների դէմ լաւագոյն միջոցն է՝ դիւրամարս և ծննդաբար ուտելիքը: Թթուներ, կծու համեմունք, ապուխտ և գրգռիչ խմիչքներ գործածելուց

պէտք է դադարել: Յղի կնոջ ստամոքսը որոշ չափով անհրաժեշտօրէն պէտք է դադարի լինի: Ստամոքսի թուլութեան դէպքում օգտակար է կլիզմաների գործածութիւնը: Ինչ վերաբերում է լուծողական և ուրիշ դեղերի՝ նրանցից երբէք չպէտք է օգտուել՝ առանց բժշկի թոյլտուութեան: Յղի կանանց վրայ վերին աստիճանի բարերար ազդեցութիւն են ունենում ոտքով կատարած զբօսանքները, տնային թեթև աշխատանքները, մաքուր և թարմ օդը, մարմնի և զգեստի մաքրութիւնը: Գոյութիւն ունի մի յիմար և դժբաղդաբար խիստ տարածւած կարծիք՝ թէ յղի կինը իբր պէտք է երկու հոգու բաժին ուտի. այդ պատճառով էլ կանանցից շատերը յղութեան ընթացքում զիտմամբ աւելի են ուտում՝ թէ ինչ է, գաւակը քաղցած չմնայ: Բայց դա մի պառակական մոլորութիւն է և ուրիշ ոչինչ:

Այդ անմտութեան ամբողջ վտանգը զիտակցելու համար բաւական է բացատրել, որ յղութեան երկրորդ ամսում սաղմը դեռ հաւկիթի չափ էլ գառած չի լինում, և որ՝ այնուհետև դարձեալ երկու ամիս անցած սաղմը այնքան քիչ է մեծանում, որ մայրը դեռ չէ էլ զգում նրա ծանրութիւնը:

Բաւական է փոքր ինչ մտածել, և այդ կարծիքը

ինքնին կը փարատւի և կինը կը հասկանայ, որ յանուն գաւակի իւրաքանչիւր անշափաւորութիւն կերակրի մէջ յղութեան առաջին ամիսները քայքայում է թէ՛ նրա անձնական առողջութիւնը և թէ՛ սաղմի զարգացման պրօցեսը:

Յղութեան երկրորդ շրջանում կնոջ համար մի նոր կեանք է սկսուում: Մինչև այժմ նրա համար հաղիւ նկատելի սաղմը արդէն սկսում է արագութեամբ մեծանալ և զարգանալ, ուստի և մօրից աւելի շատ սնունդ է պահանջում: Եւ բնութիւնը, զրգուելով կնոջ ախորժակը, ստիպում է նրան առաջւանից աւելի ուտել. լիք ստամոքսը այլևս չի նեւրում նրան, սիրտը չէ խառնում, թուլութիւն չէ պատճառում, այլ գործում է միանգամայն հեշտ և արագ: Յղութեան երկրորդ շրջանում կինը միշտ պէտք է խուսափէ ուժեղ յուզմունքներից, երկիւղից, բերկրանքից, զարմանքից, վախից, մանաւանդ վնասակար է բարկութեան կիրքը և առհասարակ այն ամենը, ինչ որ կարող է ցնցել նրա նեարդային համակարգութիւնը: Յղի կինը պէտք է խաղաղ կեանք վարէ և որքան կարելի է գերծ լինի նիւթական և հոգեկան առօրեայ հոգսերից: Կրկնում ենք, որ այրամուսինը ըստ ամենայնի ուշագիւր պէտք է լինի գէպի իւր կինը, որը շուտով նրան մի մա-

նուկ է պարզեցու: Նա պէտք է շրջապատէ կնոջը
ամենաքնքոյշ հողատարութիւններով, պէտք է քաղա-
քավարի լինի նրա հետ պէտք է բոլոր ուժովը երևան
հանէ իւր շարունակաբար անոյ անձնւիրութիւնը,
սէյրը, ծառայութիւնները: Յղիութեան երկրորդ շրջա-
 նում կնոջ գծակամէջքն ու փորը երբէք չպէտք է
 ճնշուեն կամ նեղուեն, այլապէս պտղի զարգացումը
 կը վնասուի և կը խանգարուի: Այդ պատճառով կինը պէտք
 է կտրականօրէն մերժէ ամուսնուն, երբ վերջինս իւր
 անխոհեմութեան կամ ուզողակի անամօթութեան շնոր-
 հիւ նրանցից սիրայ գարձութիւններ է պահանջում:
 Այդպիսի գէպքերում կինը ինքը պէտք է հասկացնէ
 իւր ամուսնուն սեռական բարոյականութեան տար-
 րական սկզբունքները: Բոլոր արգանդային արիւնհո-
 սութիւնները, վէրքերն ու խոցերը, դժուար ծննդաբերու-
 թիւնը, սաղմի արատաւոր զարգացումը — այդ ամենը
 հետեանք են յղիութեան երկրորդ շրջանում ունեցած
 սիրոյ անպուսպ գարձութիւններին: Անշումը և առհա-
 սարակ ամեն մի շփում կարող է անդրադառնալ
 արգանդի վրայ և խանգարել նրա կենսունակ գոր-
 ծառնութիւնը: Մկաններին կըքոտ և ջլաձգական
 կծկումները կարող են փոխել սաղմի տակաւին
 փափուկ ոսկորները, այլանդակել նրա գլուխը ծոց և

սղիաշարը, այնպէս որ՝ բոլորովին առողջ կինը, որը
 ընդունակ է արտադրելու կանոնաւոր և գեղեցիկ
 կազմածք ունեցող զաւակներ, վերը թւած պայման-
 ներում կարող է ծնել մի հաշմանդամ և թուրակազմ
 մանուկ: Այդ պատճառով էլ ասուսինները երբէք
 չպէտք է մտքներիցը հանեն այդ կարևոր փաստը:
 Գարձատե կրօսանքները, անմեղ գարձալիքները, բա-
 րերար ազդեցութիւն են ունենում յղի կնոջ վրայ,
 պատճառ որ՝ ախորժակ են զրգոում և մարսողու-
 թեան գործարաններին առանձին եռանդ են պար-
 գիւում: Այդ ժամանակ յղի կինը սննդի կարէքը աւելի
 է զգում, որովհետև թէև նրա արիւնը այլևս չէ վատ-
 նում դաշտանի շնորհիւ, բայց դա նշանակութիւն
 չունի. արիւնհոսութեան դադարումը այնուամենայնիւ
 չէ լրացնում սննդարար հիւթերի այն քանակութիւնը,
 որ կլանում է պտուղը: Քանի անում և ուժեղանում
 է սաղմը, այնքան աւելի է գնում այդ հիւթերից:
 Մօր օրգանիզմի զարգացումն է, որ պահպանում է
 սաղմը, ապա թէ ոչ վերջինս զարգացմանն ու աճ-
 մանը մեծամեծ վնասներ կը հասնէին: Մայրը չպէտք
 է միանալ ուտէ ու այն էլ մեծ քանակութեամբ,
 այլ քիչ-քիչ և օրուայ ընթացքում մի քանի անգամ:
 Նա պէտք է ուտէ առհասարակ այնքան, որքան թոյլ

են տալիս նրա մարտողութեան գործարանների ոյժն ու առողջութիւնը: Յղիութեան ժամանակ կլինը յաճախ տառապում է փորկապութեամբ, հետևապէս նա պէտք է գործածէ այնպիսի կերակուրներ, որոնք աւելի դիւրամարս են և ըստ հարկին սննդարար:

Արգանդի կծկումները քայքայում են մարտողութեան գործարանները, կնոջ սիրտը սկսում է խառնել, ախորժակը այլասեռւում է: Պատահում է, երբ կլինը շափազանց օտարօտի և անհնարին բաներ է պահանջում ուտելու համար: Կնոջ այդ ցանկութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի քմահաճոյք և կախւած են ստամոքսի ջղային տառապանքներից և երեակայութեան բոստական մոլորութիւնից:

Յղիութեան ամբողջ ժամանակաշրջանում կլինը պէտք է անկշտամբելի կանոնաւոր կեանք վարէ. սրտի և մտքի անդորրութիւնը շափազանց անհրաժեշտ է նրան: Յղի կնոջ յուզմունքները, ուրախութիւնը, տխրութիւնը, երկիւղը, վախը և այլն, շափազանց վնասակար են սաղմի համար: Կլինը պէտք է հեռու կենայ այն բոլոր պատճառներից, որոնք կարող են խախտել նրա ֆիզիքական և բարոյական հանգստութիւնը: Բայց եթէ նա որևէ պատճառով պատահարար վրդովմունքի մէջ է ընկնում, այդպիսի

դէպքերում նրա սեփական դատողութիւնը և բարեկամների խորհուրդը պէտք է օգնութեան գան նրան: Նա պէտք է խոյս տայ այն ամենից, ինչ որ տխրալի է, և աշխատէ մտածել մի միայն ուրախառիթ երևոյթների մասին: Նրա աչքերը պէտք է տեսնեն մի միայն հաճելի առարկաներ, որոնցից նա կարողանար լատպաւորութիւններ ստանալ: Կլինը պէտք է միշտ զգուշանայ վայր ընկնելուց, սայթաքելուց, որպէսզի թէ՛ ինքը և թէ՛ մանաւանդ ապագայ մանկիկը վտանգի չենթարկեն: Ամենաթեթև տկարութեան դէպքումն էլ նա պէտք է անպատճառ դիմէ բժշկին:

Եթէ կլինը պարապում է որևէ արեւոտով, նա պէտք է յղիութեան ընթացքումն էլ շարունակէ պարապել նրանով, սակայն ժամանցի համար և ոչ մինչև սեփասպառ լինելը: Թեթև գրօսանքը թարմ օգուժ շափազանց օգտակար է նրան: Վերջապէս նա կարող է որոշ դարձութիւններից ևս զուրկ չմնալ, միայն խստիւ պէտք է շափ ճանաչէ և ի սէր իւր առողջութեան խուսափէ շափազանցութիւններից:

Հնում ազգութիւնների մեծ մասը յղի կնոջը մի սրբազան էակ էր համարում: Օրէնքը խստիւ պատժում էր տղամարդին, եթէ նա վատ էր վարւում իւր յղի կնոջ հետ: Հանրապետութեան օրերում հռովմայե-

ցիք և յոյները մինչև անգամ՝ կանոններ էին սահմանել, թէ ինչպէս պէտք է վարել յղի կանանց հետ: Երբ նրանք երևում էին փողոցներում կամ քաղաքային հրապարակներում, տղամարդիկ պարտաւոր էին գլուխ խոնարհեցնել նրանց առաջ և ճանապարհ տալ նրանց: Մէկ անգամ Սոկրատէսը իւր բարեկամի հետ մի նեղ փողոցով անցնելիս՝ հանդիպեցին մի յղի կնոջ, որին ճանապարհ տալու համար՝ երկուսն էլ տեղնուտեղը սեղմեցին պատին: Կորնթոսի նւաճող հիւպատոս Մումիոսը հրապարակ գնալիս պատահեց իւր լիկտորներին և հրամայեց նրանց իջեցնել զէնքերը այն յղի կնոջ առաջ, որը այդ ըոպէին անցնում էր հրապարակով: Այդ հիւպատոսը ուզեց ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է յարգել կնոջը, որը իւր սրտի տակ կրում է ապաղայ քաղաքացիներից գուցէ լաւագոյնին: Սակայն մեր ժամանակ բարքերը փոխել են: Եւ այդ յարգանքը նկատուում է միայն բարձր դասակարգի մէջ: Հասարակ կանանց սուտար մեծամասնութիւնը զուրկ է այդ յարգանքից: Նրանք նոյն իսկ ենթակայ են ամենախոպիտ վարմունքների, հայհոյանքների և այն՝ ամենից առաջ իրանց ամուսինների կողմից: Միջին դասակարգում այդ կոպտութիւնները սակաւ են նկատուում, թէև այստեղ էլ կոպիտ և վատարարոյ ամու-

սինները ոչնչով չեն տարբերուում հարբեցող և ցոփակեաց կօշկակարներից:

Իհարկէ այդ նկարագրութիւնը ներկայ աշխատանքի նիւթին չէ վերաբերում, բայց կարծում եմ, որ նա կարող է օգուտ բերել, որովհետև եթէ վատ այբամուսիններից գոնէ մէկը կարգայ՝ հաւանական է նա ուշքի գայ և ամաչէ իւր արարմունքներից:

Գ Լ Ո Ի Խ ԺԲ.

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Դուք, հօր կոչման արժանի տղամարդիկդ, դուք որ ձեր ամբողջ երջանկութիւնը վնասուած էք ձեր կնոջ երջանկութեան մէջ, ձեր գաւազներէի առողջութեան և սյժի մէջ— լաւ յիշեցէք հետեւալ կանոնները և մի՛ շեղէք նրանցից: Ըրջատառեցէք ձեր կանանց հոգատարութիւններով և ամենախոր ուշադրութեամբ, որին նրանք արժանի են: Խօսելիս նրանց հետ՝ ժպտացէք և թող ձեր շրթունքները մի միայն սիրոյ և անձնւիրութեան խօսքեր հնչեցնեն նրանց մօտ: Եղէք նրանց ներկայութեամբ միշտ հանգիստ և անվրդով:

Երբ ձեր կինը յղի է, խուսափեցէք նրա հետ հակաճառելուց. մի խօսքով՝ եղէք նրա ցանկութիւնների և նոյն իսկ քմահաճոյքների ստրուկը, եթէ միայն այդ չի վնասի ոչ նրա, ոչ էլ ապագայ մանկիկի առողջութեանը: Եթէ— պատահեց— նրա ցան-

կութիւնները չեն համապատասխանում ձեր դրութեանը կամ վնաս են նրա առողջութեան համար՝ դուք պէտք է ապացուցէք, հասկացնէք նրան, առանց վիրաւորելու նրա ինքնասիրութիւնը, որ նա պարտաւոր է յաղթահարել այդ տեսակ ցանկութիւնները պատճառ որ՝ նրանք վնասակար են թէ՛ իրա, թէ՛ ապագայ գաւազի և թէ՛ մանուանդ այլամուսնու համար, որը այնքան սիրում է իւր կնոջը: Վանեցէք այդ ցանկութիւնները և աշխատեցէք, փոխարինել նրանց ուրիշ՝ ձեր դրութեանը աւելի համապատասխան ցանկութիւններով: Յիշեցրէք ձեր կնոջը մայրական սիրոյ մասին: Տալով այդ սրբազան անունը, դուք կարող էք հասնել այնպիսի հետեւանքների, որոնց դուցէ ամենեկին չարժանանայիր, թէկուզ ուրիշ շատ միջոցների էլ դիմած լինէիր:

Պատահում է յաճախ, որ ձեր կինը զգում է յոգնածութիւն, տխրութիւն, ջղերի թուլութիւն, թախիժ— այդ բոլորներին յարգանքով վերաբերէք դէպի նա և մի անհանգստացնէք նրան զանազան հարցուփորձերով, զանազան ազմուկներով: Թողէք նրան մենակ, եթէ նա այդ պահանջում է և՛ սպասեցէք, որ անցնի նրա ջղային լարածութիւնը, որպէսզի հնար ունենար առաջւայ պէս շուայել նրան ձեր


փառաբանքներն ու ուշադրութիւնը: Տէր նրան որքան կարելի է հաճելի գլարճութիւններ, որպէսզի նա բարոյապէս ուրախ և զոհ լինի: Վերջապէս, աշխատեցէք նոյն իսկ դուք գալ նրան, որպէսզի նրա սիրտը ձերի հետ ներդաշնակօրէն բաբախէ: Այն ժամանակ, հաւատացած եղէք, ձեր կլինը միշտ կը լսէ ձեզ՝ դուք կարող էք առաջնորդել նրան, առանց որևէ գիմարութեան նրա կողմից, առանց որևէ արգելքի գէպի այն բազմաւոր նպատակը, որին ուզում էք հասնել: Իսկ այդ պարագաներում լոյս—աշխարհ եկած երեխաները կատարելապէս զարգացած կը լինեն թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ բարոյապէս:

Բայց բոլոր կանոնները դեռ չէ թւած: Պէտք է աւելացնել և միւսները, որոնք ոչ պակաս էական են: Այսպէս օրինակ՝ կնոջ առողջաբանական կենցաղը նրա յիւութեան ժամանակ, յետոյ էլ՝ մանկիկին ծիծ տալու ժամանակ, մանկան ապագայ սնունդը, մարմնամարզութիւնը, որ նրա ֆիզիքական գաստիարակութեան մի մասն է կազմում և միշտ անհրաժեշտ է նրա գործարանների զարգացման համար: Հաւատարած եղէք, որ երբ մարդս ֆիզիքական կողմից կատարեալ է, նրա բարոյականն էլ հասնում է իւր գագաթնակէտին: Եթէ մարդս գիտակցէ, որ ամուս-

նութիւնը հասարակական կեանքի և իւր ապագայ գաւակների նկատմամբ մի լուրջ հանգամանք է, եթէ մարդ իւր ծննդաբերական գործարանների մէջ մի միայն զգայական հաճոյքներ չորոնէր, այլ նայէր նրանց գործառնութեան վրայ, իբրև մի կարևոր երևոյթի, նրա հետևանքի նկատմամբ—այն ժամանակ նա մի կողմ թողած դրամական նկատառումները՝ կ'ընտրէր իւր համար մի այնպիսի կին, որի բարոյական և ֆիզիքական արժանիքները խոստանային նրան առողջ և գեղեցիկ գաւակներ:

Նա չափաւոր կերպով կ'օգուէր սիրոյ զարճութիւններից, առանց ի չարը գործ գնելու նրանց. նա միշտ յետ կը կենար անչափաւորութիւնից, յիշելով՝ որ ծնողների չափազանցութիւնները քաւոյները միշտ գաւակներն են հանդիսանում իրանց թոյլ առողջութեամբ, ֆիզիքական պակասութիւններով, հիւանդութիւններով և մշտական գժբազգութեամբ:





1305

2013

« Ազգային գրադարան



NL0071958

